The attributes, which characterize the objective and subjective parts of the robbery according to the Criminal code of the Republic of Armenia are discussed in this article.

In this context author has analyzed the corresponding norms of the Criminal Code

of the RA and uncovered the certain practical problems. So, he suggests to qualify as a robbery the facts of raiding at illegal ascendants of property as well.

Besides, author indicates that occasionally the trial of robbery is possible too. For example, when riding is committed not at man, but at manikin.

Disputing the subjective attributes of robbery author indicates, that the obligatory attribute of robbery is the purpose of crime. So, as mentioned in the article, it is not obligatory, that the motives of robbery are only venal.

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

**ՀՀ-ՈՒՄ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ
ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԻՄՔԵՐԻ ՄԱՍԻՆ**

Ալբերտ ԱՐՐԱՀԱՍՅԱԼ

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ

Քրեական արդարադատության հիմնարար, ելակետային դրույթներից մեկը պատասխանատվության անխուսափելիության սկզբունքն է, որի համաձայն՝ հանցանք կատարած յուրաքանչյուր անձ ենթակա է քրեական պատասխանատվության: Ընդ որում, քրեաիրավական տեսության մեջ արդեն վաղուց հայտնի ճշմարտություն է, որ հանցագործությունը կանխելու առավել արդյունավետ միջոցը ոչ թե պատժի խստությունն է, այլ դրա անխուսափելիությունը: Իսկ տվյալ սկզբունքի խախտման դեպքում, երբ հանցանք կատարած որևէ անձի հաջողվում է խուսափել արդար պատասխանատվությունից, նրա մեջ առաջ է գալիս անպատժելիության զգացում, ինչն էլ հաճախ հանգեցնում է հանրորեն վտանգավոր նոր արարքների կատարման: Բացի դրանից, տվյալ հանգամանքը խիստ բացասական ազդեցություն է թողնում հասարակության մյուս անդամների վրա: Նրանք սկսում են թերահավատորեն վերաբերվել օրենքի գործողության արդյունավետությանը, հանցավոր արարքներից իրենց պաշտպանվածությանը, և, վերջին հաշվով, խարխվվում է պետության հեղինակությունը¹:

Ընդհանուր առմամբ քրեական պատասխանատվությունը կարելի է բնորոշել որպես անբարենպաստ հետևանքներ, որոնք առաջ են գալիս հանցագործության մեջ մեղավոր անձի համար²: Այս առումով պետք է նշել, սակայն, որ քրեական իրա-

վունքի տեսության մեջ մինչև այժմ միասնական մոտեցում չկա ո՛չ քրեական պատասխանատվության հասկացության, ո՛չ դրա էության, ո՛չ էլ հիմքի վերաբերյալ:

Այսպես, քրեագետների մի մասը քրեական պատասխանատվությունը բնորոշում է որպես անձի պարտականություն՝ ենթարկվելու քրեական օրենքի ներգործությանը³, կամ իր կատարածի համար պատասխան տալու պետության առջև⁴: Մյուսների կարծիքով, պատասխանատվությունը ոչ միայն պարզապես հանցանք կատարած անձի պարտականությունն է կրելու իր համար անբարենպաստ հետևանքները, այլև դրանց իրական կրումն է⁵: Քրեագետների մեկ այլ խումբ գտնում է, որ քրեական պատասխանատվությունը դատարանի դատավճռով անձի արարքին և այդ արարքը կատարած անձին տրված բացասական գնահատականն է, այդ անձի պարսավումը⁶:

Մինևույն ժամանակ, քրեաիրավական տեսության մեջ քրեական պատասխանատվությունը հաճախ նույնացվում է պետության հարկադրական ներգործության հետ: Այս իմաստով ռուս հայտնի քրեագետ Ա.Վ. Նաունովը նշում է, որ քրեական պատասխանատվությունն ընդգրկում է քրեաիրավական ներգործության բոլոր միջոցները⁷:

Ամփոփելով ներկայացված տեսակետները՝ կարելի է եզրակացնել, որ նշված բոլոր կարծիքներն էլ ինչ-որ տեղ ճիշտ են, բայց դրանցից յուրաքանչյուրը բացահայտում է քրեական պատասխանատվության միայն մի մասը, առանձին դրսևորումը: Այդ է պատճառը, որ վերջին ժամանակներս քրեական իրավունքի տեսության մեջ ավե-

լի ու ավելի տարածում է ստանում այն կարծիքը, որ քրեական պատասխանատվությունը բարդ կառուցվածքային երևույթ է, որը բնութագրվում է մի քանի հատկանիշներով⁸:

Այս տեսանկյունից քրեական պատասխանատվությունը կարելի է բնորոշել որպես հանցագործության բարդ սոցիալ-իրավական հետևանք, որն ընդգրկում է հետևյալ չորս տարրերի (կամ փուլերի) միասնությունը՝ 1) հանցանք կատարած անձի պարտականությունը՝ պատասխան տալու պետության առջև, 2) դատարանի դատավճռով անձի արարքին տրված բացասական գնահատականը և այդ անձին պարսավանք արտահայտելը, 3) մեղավորի նկատմամբ նշանակվող պատիժը կամ քրեաիրավական ներգործության այլ միջոցները, 4) դատվածությունը՝ որպես անձի դատապարտման յուրահատուկ քրեաիրավական հետևանք⁹:

Սակայն քրեական օրենսդրության բոլոր ժամանակների կիրառման պրակտիկան ցույց է տվել, որ ոչ բոլոր դեպքերում են նպատակահարմար հանցանք կատարելու համար անձին քրեական պատասխանատվության ենթարկելը և պատժելը: Ավելին, քրեական օրենքը պատահաբար խախտած և հասարակությանը լուրջ վնաս չհասցրած անձին պատժելը կարող է մի շարք դեպքերում լինել ոչ թե օգտակար, այլ վնասակար: Ուստի պատահական չէ, որ քրեական գործերի մինչդատական դադարեցումը հայտնի է արդեն վաղուց և կիրառվում է ոչ միայն Հայաստանում, այլև աշխարհի շատ երկրներում:

Ինչպես ցույց են տալիս ՄԱԿ-ի համապատասխան կառույցի իրականացրած համաշխարհային քրեական քաղաքականության հիմնական միտումների վերլուծության արդյունքները, ժամանակակից գրեթե բոլոր երկրներում արդարադատության համակարգի առանձնահատուկ բնութագրական գծերից մեկը դեռևս մինչդատական վարույթի շրջանակներում քրեական գործերի «նվազման գործընթացն» է,

որը կապված է օրենքով նախատեսված հիմքերով դրանց դադարեցման հետ: Ընդ որում, չնայած այդ գործընթացի իրականացման ընթացակարգերում առկա են մի շարք տարբերություններ, այնուամենայնիվ դրանց իրավաբանական էությունը նույնն է՝ քրեական գործի դադարեցումը հանցագործության փաստի առկայության պարագայում: Ինչ վերաբերում է պետական հարկադրանքին, ապա այն գնահատվում է որպես քրեական օրենքը խախտած անձանց նկատմամբ ներգործության բացառիկ, ծայրահեղ միջոց¹⁰:

Այդ իսկ պատճառով ժամանակակից ժողովրդավարական բոլոր երկրների քրեական և քրեադատավարական օրենսդրությամբ համապատասխան իրավասու մարմիններին (դրանց պաշտոնատար անձանց) իրավունք է վերապահվում՝ որոշելու՝ իրականացնել՝ արդյոք կոնկրետ անձանց նկատմամբ քրեական հետապնդում, թե՞ որոշակի հիմքերի առկայության դեպքում ազատել նրանց քրեական պատասխանատվությունից: Գործնականում օրենքով նախատեսված դեպքերում պատասխանատվության անխուսափելիությունը կարող է սահմանափակվել նպատակահարմարության սկզբունքով¹¹: Այս առումով արևմտյան գիտնականներն արդարացիորեն նշում են, որ օրինականության և նպատակահարմարության սկզբունքների ճիշտ հարաբերակցության բացահայտումը, վերջին հաշվով, հանցավորության դեմ պայքարի արդյունավետությունը պայմանավորող հիմնական գործոններից մեկն է: Այսպես, պորտուգալացի քրեագետ Ժ. Ֆիգեյրեդո Դիաշի կարծիքով, հանցավորության զանգվածային աճի միտումները վկայում են հանցագործության ցանկացած դեպքում քրեական պատասխանատվության ենթարկելու անհրաժեշտության աննպատակահարմարության (կամ զոնե՝ անարդյունավետության) մասին: Իրականում, ըստ հեղինակի, դատական համակարգն ունի շատ սահմանափակ հնարավորություններ, ինչն անհնար

Քրեակալ իրավունք

կամ աննպատակահարմար է դարձնում բացառապես բոլոր հանցագործությունների համար և հանցանք կատարած բոլոր անձանց դատապարտումը: Միննույն ժամանակ, ինչպես արդարացիորեն նշում է Ժ. Դիաշը, լուրջ մտահոգության տեղիք է տալիս այն հանգամանքը, որ օրենքում նպատակահարմարության սկզբունքի ոչ հստակ ձևակերպումը կարող է հուսախաբ անել հասարակության անդամներին քրեական օրենքի գործողության արդյունավետության և արդարության ապահովման սպասումներում: Ուստի անհրաժեշտ է ձեռնարկել և իրականացնել այդ սպասումներն արդարացնելուն ուղղված բոլոր միջոցները¹²:

Ինչևէ, առաջադեմ գրեթե բոլոր պետությունների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության քրեական և քրեադատավարական օրենքները նորմեր են պարունակում հանցանք կատարած անձանց քրեական պատասխանատվությունից ազատելու համապատասխան հիմքերի, կարգի և պայմանների վերաբերյալ: Սակայն դրանք չի կարելի շփոթել այն վիճակների հետ, երբ անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության, քանզի նրա կատարած արարքը հանցագործության հատկանիշներ չի պարունակում: Մասնավորապես, ի տարբերություն նման դեպքերի, քրեական պատասխանատվությունից ազատելը հնարավոր է միայն այն ժամանակ, երբ առկա են անձին քրեական պատասխանատվության ենթարկելու բոլոր նախադրյալները, և նրա արարքը պարունակում է որևէ կոնկրետ հանցագործության բոլոր հատկանիշները:

ՀՀ քրեական օրենսգրքի համաձայն՝ անձին քրեական պատասխանատվության ենթարկելու հարց չի կարող առաջանալ, եթե նա՝

1) կատարել է արարք, որում բացակայում են քրեական օրենքով նախատեսված

որևէ հանցակազմի հատկանիշները կամ դրանցից թեկուզ մեկը (քր. օր.-ի հոդված 3),

2) կատարել է գործողություն կամ անգործություն, որը թեև ձևականորեն պարունակում է ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված որևէ արարքի հատկանիշներ, սակայն իր նվազ կարևորության պատճառով հասարակական վտանգավորություն չի ներկայացնում (քր. օր.-ի հոդված 18-ի երկրորդ մաս),

3) կանոնները հրաժարվել է հանցագործությունից (քր. օր.-ի հոդված 36),

4) կատարել է արարք, որում առկա է դրա հանցավորությունը բացառող որևէ հանգամանք (քր. օր.-ի հոդվածներ 42-47):

Նշված բոլոր դեպքերում արարքը չի կարող հանցագործություն համարվել, ուստի և ի սկզբանե բացակայում է քրեական պատասխանատվության հիմքը:

Քրեական պատասխանատվությունից ազատելու մասին խոսք չի կարող լինել նաև այն դեպքերում, երբ ապացուցված չէ մեղադրյալի մասնակցությունը հանցագործությանը, երբ առկա են քրեական գործի վարույթը կամ քրեական հետապնդումը բացառող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հոդված 35-ով նախատեսված հանգամանքները (ամձը մահացել է, համաներման ակտ է ընդունվել և այլն): Նշված հոդվածում նախատեսված հանգամանքներն այնպիսին են, որ քրեական հետապնդման դադարեցումը դրանցից յուրաքանչյուրի առկայության դեպքում պարտադիր է, և այդ հարցի լուծումը չի կարող թողնվել դատարանի, դատախազի, քննիչի կամ հետաքննություն կատարող անձի հայեցողությանը:

Այսպիսով, քրեական պատասխանատվությունից ազատելը պետական իրավասու մարմնի որոշումն է կոնկրետ հանցագործության հատկանիշներ պարունակող արարք կատարած անձի նկատմամբ պատիժ կամ քրեաիրավական ներգործության այլ միջոց չկիրառելու միասին:

Սակայն մինչև քրեական պատասխա-

նատվությունից ազատելու՝ ՀՀ քրեական գործող օրենսգրքով նախատեսված տեսակների ընդհանուր բնութագրի քննարկումն անհրաժեշտ ենք համարում համառոտ անդրադառնալ նաև տվյալ ինստիտուտի առանձնահատկություններին՝ ըստ նախկին օրենսդրության:

Այսպես, նախկին օրենսդրությամբ քրեական պատասխանատվությունից ազատելու հարցը կարող էին լուծել ինչպես դատարանը, այնպես էլ դատախազը, քննիչը կամ հետաքննություն կատարող մարմինը (ՀՀ նախկին քր. դատ. օր.-ի հոդված 57), ինչի մասին նշված էր նաև քրեական օրենսգրքի առանձին հոդվածներում: Նոր քրեական օրենսգրքը նախատեսում է միայն քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքերը, իսկ դրա դատավարական կարգի սահմանումը, ինչպես և պետք է լիներ, արդարացիորեն թողնված է քրեական դատավարության օրենսդրությանը: Մասնավորապես, ՀՀ գործող քր. դատ. օր.-ի հոդված 37-ը սահմանում է այն հանգամանքները, որոնք թույլ են տալիս չհարուցել քրեական գործ և չիրականացնել քրեական հետապնդում, եթե առկա են ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքերը:

Այս նույն հոդվածը, սակայն, նման իրավունք է վերապահում միայն դատախազին, ինչը, ըստ մեզ, չի կարելի ճիշտ և արդարացված համարել: Փաստորեն, տվյալ դեպքում ոչ միայն նախկին օրենսդրության համեմատ քայլ է կատարվել դեպի հետ (քանզի, ինչպես նշվեց, նախկինում նույն իրավունքը տրված էր նաև դատարանին), այլև լուրջ հակասություններ կան ՀՀ գործող Սահմանադրության հետ: Բանն այն է, որ մինչդատական կարգով առանց արդարացման հիմքի անձին քրեական պատասխանատվությունից ազատելը, մեր կարծիքով, հակասում է ՀՀ Սահմանադրության հոդված 21-ին, որի համաձայն՝ «Հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորութ-

յունը ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով»: Ընդ որում, սահմանադրական տվյալ նորմը, ըստ էության, արտացոլում է 1948թ. «Մարդու իրավունքների հանընդհանուր հռչակագրի» հոդված 11-ը: Մինչդեռ ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքի համաձայն՝ դատախազը, փաստորեն, կարող է անձին հանցագործության մեջ մեղավոր ճանաչել և ազատել նրան քրեական պատասխանատվությունից: Իսկ առավել հետաքրքիրն այն է, որ դատարանին նման իրավունք ընդհանրապես վերապահված չէ: Այսինքն, եթե գործը դատարանում քննելիս ի հայտ գան այնպիսի հանգամանքներ, որոնք նախատեսված են քրեական օրենսգրքում որպես քրեական պատասխանատվությունից ազատելու հիմք (գործուն զոջալը, տուժողի հետ հաշտվելը, իրադրության փոփոխվելը), ապա դատարանը, փաստորեն, չի կարող ազատել անձին քրեական պատասխանատվությունից: Այս դեպքում միայն դատախազն իրավունք ունի չիրականացնելու քրեական հետապնդում և դրանից հրաժարվելու մասին հայտարարություն անելու դատարանում (քր. դատ. օր.-ի հոդված 37-ի երրորդ մաս):

Նախկին օրենսդրությամբ, եթե հանցանք կատարած անձն առարկում էր չարդարացնող հիմքերով քրեական պատասխանատվությունից ազատելու դեմ, գործի վարույթը շարունակվում էր սովորական կարգով (ՀՀ քր. դատ. նախկին օրենսգրքի հոդված 5-ի երկրորդ մաս), իսկ երաշխավորությամբ հանձնելու դեպքում՝ կարող էր պահանջել գործը քննել դատարանում: Գործող օրենսդրությամբ անձի այս իրավունքը սահմանափակվել է: Այս առումով նշենք, որ չնայած պրակտիկայում նման դեպքերը հազվադեպ են, սակայն դրանով հնարավորություն է ստեղծվում ապահովելու, որ անձը հանցագործության մեջ մեղավոր ճանաչվի միայն դատարանի կողմից:

Մեր կարծիքով, հանցագործության մեջ անձի մեղավորությունը պետք է հաստատի

Քրեական իրավունք

միայն դատարանը, և նման իրավունքի վերապահումն այլ մարմինների, թեկուզ և մեղադրյալի համաձայնությամբ, անմեղության կանխավարկածի սկզբունքի կոպիտ խախտում է, ինչն անհրաժեշտ է անհապաղ վերացնել:

Հարկ ենք համարում նշել նաև, որ ՀՀ նախկին քր. օր.-ի ընդունումից հետո քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտը լայնորեն կիրառվել է հատկապես այն նորմերի ուժով, որոնք սահմանում էին հասարակական ներգործության միջոցների կիրառման հնարավորություն: Վերջիններս կարող էին կիրառվել քրեական պատասխանատվությունից ազատելուց հետո (անչափահասի վերաբերյալ նյութերը անչափահասների գործերի հանձնաժողով ուղարկելը, գործն ընկերական դատարան հանձնելը և անձին երաշխավորությամբ հանձնելը):

Եթե սկզբնական շրջանում նշված նորմերի կիրառումը արդյունավետ էր, ապա վերջին տարիներին (հատկապես՝ 90-ականների սկզբից) այն ձևական բնույթ էր կրում: Նոր քրեական օրենսգիրքը հրաժարվեց քրեական պատասխանատվությունից ազատելու այն տեսակներից, որոնք կապված են հասարակական ներգործության կիրառման հետ՝ փոխարենը նախատեսելով այլ տեսակներ, որոնց արդյունավետությունը, մեր կարծիքով, կարող է ավելի բարձր լինել:

Մասնավորապես, ՀՀ քրեական գործող օրենսգրքի Ընդհանուր մասում նախատեսված են քրեական պատասխանատվությունից ազատելու հետևյալ տեսակները.

- 1) գործուն զոջալու դեպքում (հոդված 72),
- 2) տուժողի հետ հաշտվելու դեպքում (հոդված 73),
- 3) իրադրության փոփոխման դեպքում (հոդված 74),
- 4) վաղեմության ժամկետն անցնելու

հետևանքով (հոդված 75),

5) դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելով (հոդված 91):

Բացի թվարկվածներից՝ քրեական պատասխանատվությունից ազատելու առանձնահատուկ տեսակ է նաև քրեական օրենսգրքի հոդված 82-ով նախատեսված համաներումը:

Հարկ է նշել նաև, որ ՀՀ քր.օր.-ի Հատուկ մասի մի շարք հոդվածներում նախատեսված են խրախուսական նորմեր, որոնց ուժով անձը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից: Այս նորմերը քրեական պատասխանատվությունից ազատելու հատուկ դրսևորումներ են: Այսպես, օրինակ, քրեական օրենսգրքի հոդված 218-ի 4-րդ մասի համաձայն՝ իր պահանջներից հրաժարված և պատանդին կամովին ազատ արձակած անձն ազատվում է պատանդ վերցնելու կամ պահելու համար նախատեսված քրեական պատասխանատվությունից, եթե նրա գործողություններն այլ հանցակազմ չեն պարունակում:

Քրեական օրենսգրքի համաձայն՝ քրեական պատասխանատվությունից ազատելու հարցը լուծելիս առաջին հերթին հաշվի են առնվում կատարված հանցանքի հասարակական վտանգավորության աստիճանը և բնույթը: Այսպես, տուժողի հետ հաշտվելու դեպքում անձը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե նա կատարել է միայն ոչ մեծ ծանրության, իսկ գործուն զոջալու դեպքում՝ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք: Միևնույն ժամանակ պետք է նշել, որ նման հիմքերի առկայության դեպքում քրեական պատասխանատվությունից ազատելը կիրառվում է, եթե առկա են քրեական օրենսգրքի հոդվածներ 72-74-ում և հոդված 91-ում նախատեսված պայմանները:

Չնայած օրենքը պատասխանատվությունից ազատելը չի կապում պատժի նպատակների հետ (հանցավորի ուղղվելն առանց պատիժ կրելու), սակայն այն չպետք

է հակասի քրեական օրենսդրության խնդիրներին և պատժի նպատակներին: Քրեական պատասխանատվությունից ազատելու՝ նշված նորմերի վերլուծությունը ցույց է տալիս, որ քրեական պատասխանատվությունից ազատելու հիմք է հանդիսանում հանցանքի և այն կատարած անձի ոչ բարձր հասարակական վտանգավորությունը:

Վերը նշված հիմքերով (բացառությամբ տուժողի հետ հաշտվելու դեպքի) անձին քրեական պատասխանատվությունից ազատելու պարտադիր պայման է համարվում հանցանքն առաջին անգամ կատարելը: Որպես այդպիսին պետք է հասկանալ այն դեպքերը, երբ անձը՝

ա) փաստացի առաջին անգամ է հանցանք կատարել,

բ) նախկինում կատարած հանցանքի համար ազատվել է քրեական պատասխանատվությունից ցանկացած հիմքով,

գ) նախկինում կատարածի համար դատվածությունն օրենքով նախատեսված կարգով մարվել կամ հանվել է:

Պետք է նշել սակայն, որ մասնագիտական գրականության մեջ «առաջին անգամ» հասկացության կապակցությամբ առկա են տարբեր մոտեցումներ, որոնց պատճառով քրեական պատասխանատվությունից ազատելու նորմերը պրակտիկայում հաճախ կիրառվել և կիրառվում են ոչ միատեսակ: Մեր կարծիքով, եթե խզվել են նախկին հանցագործության հետ անձի բոլոր իրավական կապերը (քրեական օրենսգրքի հոդված 84-ի ութերորդ մասի համաձայն՝ դատվածությունը հանելը կամ մարելը վերացնում է դատվածության հետ կապված իրավական բոլոր հետևանքները), ապա նոր հանցանքը չի կարող դիտվել երկրորդ անգամ կատարված:

Այլ բան է, որ քրեական պատասխանատվությունից ազատելու հարցը լուծելիս պետք է հաշվի առնել ոչ թե հանցանքը երկրորդ անգամ կատարելու փաստը, այլ հանցավորի անձը: Այսպես, եթե նա նախկինում դիտավորությամբ կատարել է հա-

մասեռ հանցագործություն և արդեն ազատվել է քրեական պատասխանատվությունից, ապա նրա նկատմամբ դրսևորված մարդասիրությունը, փաստորեն, արդյունավետ չի եղել¹⁹:

Ի տարբերություն նախկին քր. օր.-ի՝ ՀՀ քրեական գործող օրենսգրքը քրեական պատասխանատվությունից ազատելու դեպքում չի նախատեսում քրեական պատասխանատվության փոխարինումը ներգործության որևէ այլ միջոցով (վարչական, հասարակական)՝ բացի հոդված 91-ով նախատեսված՝ անչափահասների նկատմամբ կիրառվող դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներից: Քրեական պատասխանատվությունից ազատելու բոլոր տեսակները համարվում են առանց որևէ պայմանի կիրառվող. մեղավորի նկատմամբ դրանից հետո չեն ներկայացվում պահանջներ, որոնք վերաբերում են նրա հետագա վարքագծին:

Միևնույն ժամանակ հարկ ենք համարում նշել, որ քրեական պատասխանատվությունից ազատելը գործում զղջալու, տուժողի հետ հաշտվելու, իրադրության փոփոխման դեպքերում կամ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելով, ըստ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հոդված 37-ի, դատախազի իրավունքն է, այլ ոչ թե պարտականությունը: Սակայն, մեր կարծիքով, եթե առկա են քրեական պատասխանատվությունից ազատելու՝ օրենքով նախատեսված հիմքեր և պայմաններ, ապա քրեական պատասխանատվությունից ազատելու վերը նշված տեսակների կիրառման հնարավորության պարտադիր քննարկումը պետք է սահմանվի որպես պարտականություն: Ընդ որում, նման դեպքերում իրավակիրառողը պետք է պատճառաբանված հիմնավորում տա դրանց կիրառման ինչպես հնարավորության, այնպես էլ անհնարի-նության կապակցությամբ:

Ինչպես այս առումով ցույց են տալիս ոչ արդարացման հիմքերով քրեական պատասխանատվությունից ազատելու պրակ-

Քրեպատասխանություն

տիկայի ուսումնասիրության արդյունքները, նշված հարցի լուծումը միայն համապատասխան մարմնի իրավունք վերապահելը, առանց հարցի քննարկման պարտականության օրենսդրական սահմանման, կամայականության տեղիք է տալիս: Արդյունքում հաճախ հնարավոր չի լինում պարզել, թե այս կամ այն դեպքում անձնինչ պատճառով չի ազատվել քրեական պատասխանատվությունից, թեև դրա համար առկա էին օրենքով նախատեսված բոլոր հիմքերը:

Այսպիսով, չնայած քրեական արդարադատության հիմնարար ելակետային դրույթներից մեկը պատասխանատվության անխուսափելիության սկզբունքն է, այնուամենայնիվ քրեական օրենսդրության բոլոր ժամանակների կիրառման պրակտիկան ցույց է տվել, որ ոչ բոլոր դեպքերում է նպատակահարմար (կամ զոհն՝ արդյունավետ) հանցանք կատարելու համար անձին քրեական պատասխանատվության ենթարկելը և պատժելը: Ուստի պատահական չէ, որ հանցանք կատարած անձին քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտը հայտնի է արդեն վաղուց և կիրառվում է ոչ միայն Հայաստանում, այլև աշխարհի շատ երկրներում:

- ¹ Տե՛ս Досаева Г.С. Проблемы соответствия принципов неотвратимости ответственности и справедливости при освобождении от уголовной ответственности в связи с примирением с потерпевшим и деятельным раскаянием. Юрист - Правоведъ, 2010. N 1, էջ 38:
- ² Տե՛ս ՀՀ քրեական իրավունք: Ընդհանուր մաս: Եր., ԵՊՀ հրատ., 2011, էջ 229:
- ³ Տե՛ս Браинин Я.М. Уголовная ответственность и ее основание в советском уголовном праве. М., 1963, էջ 25:
- ⁴ Տե՛ս Советское уголовное право. Общая часть. М., 1982, էջ 77:
- ⁵ Տե՛ս Курс советского уголовного права. Т. 1. Л., 1968, էջեր 222-223:
- ⁶ Տե՛ս Демидов Ю.А. Социальная ценность и оценка в уголовном праве. М., 1975, էջ 163:
- ⁷ Տե՛ս Наумов А.В. Российское уголовное право. М., 1996, էջ 246:

- ⁸ Տե՛ս Уголовное право. Общая часть. М., 1992, էջեր 48-49, Уголовное право России. Общая часть. М., 1997, էջեր 53-57:
- ⁹ Տե՛ս նաև ՀՀ քրեական իրավունք: Ընդհանուր մաս, էջ 230:
- ¹⁰ Տե՛ս Головкин Л. Прощение долга - одно из оснований прекращения уголовного дела// Российская юстиция, 1998, N4:
- ¹¹ Տե՛ս Ashworth A., Fioda J. Новый Кодекс для государственных обвинителей: Уголовное преследование, ответственность и общественный интерес//Criminal Law Review. 1994. N12, էջեր 894-909:
- ¹² Տե՛ս Figueiredo Dias J. Роль прокуратуры в уголовном судопроизводстве // Revue internationale de criminologie et de police technique. V. 49. 1995. N 4, էջեր 387-394:
- ¹³ Տե՛ս նաև ՀՀ քրեական իրավունք: Ընդհանուր մաս, էջեր 468-469:

**ABOUT THE CONCEPT AND PRINCIPLES OF THE
EXAMPTION FROM CRIMINAL LIABILITY IN
THE REPUBLIC OF ARMENIA**

Albert ABRAHAMYAN

*Post-graduate student of the Institute of
phylosophy, sociology and law of the National
Academy of Sciences of the RA*

The problems of the concept and principles of the examption from criminal liability according to the Criminal Code of the Republic of Armenia are discussed in this article.

In this context author analyzes opinions

of different scientists and indicates, that criminal liability is a complicated, structural phenomenon, which is characterized by the comlex of various attributes.

After that author indicates the inexpedience of criminal liability in all circumstances and for every crime. So, as mentioned in the article, it is not casual, that Criminal and Criminal-Procedural codes of present-day democratic countries (also of the RA) contain principles of the examption from criminal liability.

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

**ՊԵՏԱԿԱՆ ԳԱՐՏՆԻՔԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՈՐՊԵՍ ՀՀ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱՂԱԴՐԻՉ**

Գոռ ԵՆԳԻԲԱՐՅԱԼ

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ

Ազգային անվտանգության ապահովումը եղել և մնում է պետության կարևորագույն գործառնություններից մեկը:

Գոյություն ունեն ազգային անվտանգության հասկացության բազմաթիվ բնորոշումներ, սակայն թե՛ տեսական, թե՛ գործնական մշակումներում որպես հիմք է ընդունվում նախ և առաջ դրա իրավաբանական սահմանումը: ՀՀ օրենսդրության մեջ այն իր տեղն է գտել 2001թ. դեկտեմբերի 28-ին ընդունված «Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածում: **«ՀՀ ազգային անվտանգությունը պետության և հասարակության այնպիսի կացությունն է, երբ ապահովված է անձի, հասարակության և պետության անվտանգությունը, երկրի տարածքային ամբողջականությունը, ինքնիշխանությունը, սահմանադրական կարգը, տնտեսության բնականոն զարգացումը, հասարակության նյութական և հոգևոր արժեքների, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, շոջակա միջավայրի պաշտպանությունը ներքին և արտաքին սպառնալիքներից»:**

Այդպիսով, ազգային անվտանգությունը, փաստորեն, անձի, հասարակության և պետության կենսական փոխկապակցված շահերի ապահովվածության վիճակն է: Հնարավոր չէ պատկերացնել անձի անվտանգությունն առանց պետական և հասարակական անվտանգության, և չեն կարող անվտանգ լինել այն հասարակությունն ու պետությունը, որտեղ վտանգված են անձի կենսական շահերը, նրա իրավունքներն ու

ազատությունները: Այս առումով՝ իրավացի պետք է համարել արևմտյան երկրներում տարածված տեսակետը, որն ամփոփ ձևակերպել է Մեծ Բրիտանիայի նախկին վարչապետ Թոնի Բլերը. **«Առանց ազգային անվտանգության հիմնախնդիրների լուծման հնարավոր չէ խոսել մարդու իրավունքներից և ընդհանրապես ժողովրդավարության զարգացումից»:**

Անձի, հասարակության և պետության անվտանգության մակարդակը (ապահովվածության և պաշտպանվածության) մեծապես կախված է պետական և հասարակական բոլոր կառույցների (տնտեսական, քաղաքական, սոցիալական, իրավական, տեղեկատվական և այլն) գործունեությունից: Հետևաբար, ազգային անվտանգության համակարգը ձեռք է բերում բարդ կառուցվածք, որում կարելի է առանձնացնել բաղկացուցիչ մասեր, ենթահամակարգեր: Լայն ընդգրկման շնորհիվ դրանք նույնպես հաճախ դիտվում են որպես առանձին համակարգեր: Անդրադառնանք դրանցից մեկին՝ տեղեկատվական անվտանգության համակարգին:

Ժամանակակից պայմաններում անձի, հասարակության և պետության տեղեկատվական անվտանգությունն ընդունված է պատկերացնել որպես չորս բաղադրիչների միասնություն: Դրանք են՝ 1) հոգևոր-մշակութային անվտանգությունը, 2) տեղեկատվական-հոգեբանական անվտանգությունը, 3) պետական և օրենքով նախատեսված այլ գաղտնիքի պահպանությունը, 4) տեղեկատվական-տեխնիկական անվտանգությունը (այլ կերպ՝ համակարգչային անվտանգությունը կամ կիբեռանվտանգությունը)³:

Գործնականում ներառելով մարդու բանական ողջ գործունեությունը, հոգևոր աշ-

խարհը, նրա ստեղծած մշակութային, գիտական, տեխնիկական, տեխնոլոգիական և այլ համապարփակ հարստությունը՝ տեղեկատվական համակարգը վճռորոշ ազդեցություն է թողնում հանրային գիտակցության, պետական և հասարակական կյանքի բազմազան կողմերի վրա: Գիշտ է նկատված, որ **«այսօր տեղեկատվական համակարգի զարգացման մակարդակից մեծապես կախված է ցանկացած պետության և ազգի քաղաքական, գաղափարախոսական, հոգեբանական, տնտեսական, ռազմական և այլ ոլորտների անվտանգությունն ու հետագա առաջընթացը»**: Ավելացնենք, որ տեղեկատվական համակարգի զարգացման մակարդակով են պայմանավորված նաև անձի անվտանգությունն ու հետագա զարգացումը: Ի վերջո, տեղեկույթը, ինչպես էլ այն սահմանվի օրենքներում, մեկնաբանվի մասնագիտական գրականության մեջ, սովորական կյանքում եղել է, կա և լինելու է անձանց հաղորդակցման, շփման պարտադիր և անփոխարինելի միջոց, ու դրա որակից, արժանահավատությունից է նաև մեծապես կախված, թե որքանով են իրավահավասար և արդյունավետ սոցիալական հարաբերությունները, ինչը մարդկային զարգացման կարևորագույն գործոններից մեկն է:

Տեղեկույթի ստեղծման, ձեռքբերման, փոխանցման և օգտագործման ընթացքում ձևավորվող հասարակական հարաբերություններն պետք է ենթարկվեն բազմակողմանի և ժամանակակից պահանջները բավարարող օրենսդրական կարգավորման: Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգության հայեցակարգը՝ որպես քաղաքական փաստաթուղթ, նման կարգավորման հիմքն է միայն, ուղեցույցը: Խոսքը տեղեկատվական անվտանգության ոլորտում նորմատիվ-իրավական դաշտի ստեղծման մասին է, և պետք է նշել, որ այդ ուղղությամբ հանրապետությունում կատարվել են կարևոր քայլեր. ընդունվել են ոլորտին առնչվող «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին», «Տեղեկատվության ազատության մասին», «Անհատական տվյալների մա-

սին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին», «Արխիվային գործի մասին», «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքները: Եական նշանակություն ունեցավ նաև ՀՀ Ազգային ժողովի կողմից «Կիրեռիանցագործությունների մասին» Եվրախորհրդի կոնվենցիայի և այդ կոնվենցիային կից «Համակարգչային համակարգերի միջոցով կատարվող ռասիստական և քսենոֆոբիական բնույթի արարքների քրեականացման մասին» լրացուցիչ արձանագրության վավերացումը:

Քննարկման փուլում է նաև «Տեղեկույթի պաշտպանության մասին» (այլ խմբագրությամբ՝ «Տեղեկատվության, տեղեկատվական տեխնոլոգիաների և տեղեկատվության պաշտպանության մասին») օրենքի նախագիծը: Այդ օրենքի ընդունումով, թերևս, կամբողջացվի մեր երկրում տեղեկույթի պահպանության և պաշտպանության ոլորտը կարգավորող օրենսդրությունը:

Այնուամենայնիվ ակնհայտ է, որ ազգային անվտանգության ու դրա բաղկացուցիչ մաս կազմող տեղեկատվական անվտանգության ոլորտում առկա են լուրջ հիմնահարցեր ինչպես ծագող հարաբերությունների իրավական կարգավորման, այնպես էլ իրավակիրառական պրակտիկայի կատարելագործման ասպարեզում:

Նախ՝ որոշակի իրավական վակուում է առաջացրել «Ազգային անվտանգության մասին» (կամ «Անվտանգության մասին») ՀՀ օրենքի բացակայությունը, որը պետք է սահմանի ոլորտի հիմնական հասկացությունները, կարգավորման սկզբունքներն ու հիմնադրույթները: Ժամանակին՝ դեռևս «Ազգային անվտանգության ռազմավարության» (հաստատվել է ՀՀ նախագահի 07.02.2007թ. ՆՀ-37-ն իրամանագրով) մշակման փուլում, հնչել են կարծիքներ, որ այն պետք է վերափոխել օրենքի, սակայն փաստաթուղթը կազմող միջգերատեսչական հանձնաժողովը առաջարկել է այն ընդունել ՀՀ Նախագահի իրամանագրով: Հաշվի են առնվել նման քաղաքական փաստաթղթի ընդունման համաշխարհա-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

յին փորձը (ՌԴ, ԱՄՆ և այլ երկրներ) և այն մտավախությունը, որ տվյալ շրջանում փաստաթղթի **«Կերպափոխումը օրենսդրական ակտի կարող էր զսպաշափիկ դառնալ քաղաքացիական հասարակության կայացման, ընդհանուր առմամբ՝ Հայաստանի ժողովրդարացման համար»⁵:**

Ընդունելով այս հայեցակետը որպես ժամանակի թելադրանք, որը **«բխում էր մեր ազգային անվտանգության շահերի ռեալ քաղաքական հաշվարկումից»⁶**, միաժամանակ չի կարելի անտեսել «Ազգային անվտանգության մասին» ՀՀ օրենքի ընդունման անհրաժեշտությունը, որն օր օրի ավելի է հասունանում երկրում ժողովրդավարական զարգացումներին զուգընթաց: Նույնը պետք է ասել «Տեղեկության պաշտպանության մասին» օրենքի վերաբերյալ («Տեղեկատվության ազատության մասին») ՀՀ օրենքն այսօր չի համապատասխանում ժամանակակից պահանջներին, այնտեղ անգամ տրված չէ տեղեկատվության (տեղեկության) իրավաբանական սահմանումը, չկան տեղեկատվության դասակարգման, դրա պաշտպանությանը վերաբերող կոնկրետ դրույթներ և այլն):

Հիշյալ օրենքների ընդունման պահանջն ուղղակիորեն թելադրված է այն հիմնական ուղղություններով, որ այսօր առկա են տեղեկատվական անվտանգության ապահովման ոլորտում:

Փորձենք ներկայացնել այդ ուղղությունները՝ հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգության հայեցակարգի» (հաստատվել է ՀՀ նախագահի 26.06.2009 թ. ՆԿ-97-ն կարգադրությամբ, այսուհետ՝ Հայեցակարգ) հետևյալ դրույթը. **«Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգությունը հանրապետության ազգային շահերի պաշտպանվածությունն է տեղեկատվական ոլորտում՝ փոխկապակցված անձի, հասարակության և պետության հավասարակշռված շահերի ընդհանրության հետ»** (գլուխ 2)⁷:

Տեղեկատվական ոլորտում անձի, հասարակության և պետության հավասարակշռված շահն առաջին հերթին ենթադրում է նրանց ապահովումը ժամանակին հաղորդվող և հուսալի տեղեկատվությամբ, առանց որի հնարավոր չէ որևէ առաջընթաց: Ընդ որում՝ ապահովումն այստեղ, ինչպես ազգային անվտանգության պարագայում, պետք է կրի ակտիվ բնույթ, այսինքն՝ ներառի ակտիվ գործողություններ (մասնավորապես քարոզչության միջոցով)՝ ուղղված տեղեկատվական ոլորտում ազգային շահերի բավարարմանը: Նման մոտեցման համար հիմք կարող են ծառայել նաև Հայեցակարգում ամրագրված՝ տեղեկատվական ոլորտում Հայաստանի Հանրապետության ազգային շահերի բաղադրիչները, որոնք ընդհանրական ձևով կարելի է ներկայացնել այսպես.

- քաղաքացիների տեղեկատվական ազատության իրավունքի ապահովում.

- հասարակության բարոյական արժեքների, հայրենասիրական և մարդասիրական ավանդույթների, մշակութային և գիտական ներուժի ամրապնդում.

- ՀՀ պետական քաղաքականության տեղեկատվական ապահովում:

Հատկանշական է, որ վերջիններիս դեմ ոտնձգությունները նույն փաստաթղթում դիտվում են որպես ՀՀ տեղեկատվական անվտանգության սպառնալիքների առանձին տեսակներ (գլուխ 3):

Տեղեկատվական անվտանգության ապահովման առաջնային և առավել ընդհանուր ուղղությունը տեղեկատվության ազատության ապահովումն է: Նկատենք, սակայն, որ տեղեկույթը, այդքան կարևոր դեր խաղալով հանդերձ, կարող է նաև վնասել հասարակական հարաբերություններին, հատկապես երբ այն վերաբերում է ազգային անվտանգության ոլորտին: Խոսքն առաջին հերթին խեղաթյուրված կամ կեղծ տեղեկության ներդրման մասին է: Հայեցակարգում, դիցուք, ուղղակի սպառնալիք է դիտվում նաև **«տեղեկատվական ապակողմնորոշումը ապատեղեկատվության, կեղծ և խեղաթյուրված տեղեկատվության տարածման միջոցով»** (գլուխ 3):

Ազգային շահերի համար ոչ պակաս վտանգ են ներկայացնում նաև նպատակաուղղված բացասական տեղեկատվական ազդեցությունները: Խոսքն այստեղ այն ազդեցությունների մասին է, որոնք, ինքնին չհանդիսանալով կեղծ կամ խեղաթյուրված տեղեկատվություն, այդուհանդերձ կարող են դիտավորյալ սխալ ներկայացվել՝ էական վնաս պատճառելով հոգևոր-մշակութային, տնտեսական, քաղաքական և այլ ոլորտներում ՀՀ ազգային շահերին: Հայեցակարգում դրանք նույնպես դիտվում են որպես տեղեկատվական անվտանգության դեմ ուղղված կոնկրետ սպառնալիքներ: Այդպիսիք են՝

- հայ հասարակության մեջ արմատավորված արժեքներին անհարիր հոգևոր, բարոյական այլ արժեքների և բռնության պաշտամունքի վրա հիմնված զանգվածային մշակույթի օրինակների քարոզչությունը.

- հոգևոր արժեքների արժեզրկումը, հայոց լեզվի, հայկական մշակույթի և Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու դերի թուլացումը.

- Հայաստանի ազգաբնակչության հոգևոր, բարոյական և ստեղծագործական ներուժի թուլացումը (գլուխ 3):

Մասնագիտական գրականության մեջ իրավացիորեն նշվում է, որ **«նպատակաուղղված տեղեկատվական ազդեցությունները կարող են ունենալ հեռուն զնացող ապակառուցողական (դեստրուկտիվ) հետևանքներ ինչպես առանձին անհատի, հասարակության, պետության, այնպես էլ քաղաքակրթության ինքնին գոյության համար»**»:

Մյուս կողմից՝ տեղեկացվածությունն ունակ է զգալիորեն մեծացնելու քաղաքական, ռազմական և այլ բնույթի որոշումների ու գործողությունների արդյունավետությունը, որոշակի տեղեկությունների տիրապետելը ի գորու է հզորացնելու հակամարտության մի կողմին և թուլացնելու մյուսին: Ինչպես հին քրմերն էին ասում. «ով տիրապետում է տեղեկատվությանը, նա տիրում է աշխարհին»: Այդ պատճառով նշված բնույթի տեղեկությունները ենթակա են պետական հատուկ պաշտպանության:

Հայեցակարգում տեղեկատվության ոլորտում ազգային շահերի հինգերորդ բաղադրիչը ներառում է «տեղեկատվական ռեսուրսների պաշտպանվածությունը չթուլատրված հասանելիությունից, տեղեկատվության, կապի և հեռահաղորդակցության համակարգերի անվտանգության ապահովումը»: Այդ նպատակով անհրաժեշտ է համարվում «բարձրացնել Հայաստանի Հանրապետության պետական իշխանության մարմինների, ֆինանսական, բանկային համակարգի, տնտեսական գործունեության ոլորտի, զինուժի, կառավարման, ինչպես նաև բնապահպանական տեսանկյունից վտանգավոր և տնտեսական կարևոր նշանակություն ունեցող արտադրությունների տեղեկատվական անվտանգության համակարգերի և կապի առաջնային ցանցերի պաշտպանվածության մակարդակը, զարգացնել տեղեկատվության պաշտպանության սարքավորումների և ծրագրային միջոցների հայրենական արտադրությունը, բարձրացնել դրանց գործունեության վերահսկման արդյունավետությունը, ապահովել պետական գաղտնիք պարունակող տեղեկատվության պաշտպանությունը» և այլն (գլուխ 2):

Այսպիսով, տեղեկատվական անվտանգության ապահովման ոլորտում կարելի է առանձնացնել հետևյալ ուղղությունները.

– տեղեկույթի ազատության ապահովում.

– ապատեղեկատվության արգելափակում.

– տեղեկատվական բացասական ազդեցությունների չեզոքացում.

– որոշ տեղեկությունների շրջանառության նկատմամբ օրենքով սահմանված սահմանափակումների կիրառում (դրանց պաշտպանություն արտահոսքից):

Դժվար չէ նկատել, որ տեղեկույթի հսկայական զանգվածում իրենց առանձնահատուկ տեղն ունեն այն տեղեկությունները, որոնց շրջանառության նկատմամբ տեղեկատվական անվտանգության ապահովման նկատառումներով անհրաժեշտ է կիրառել սահմանափակումներ և պաշտպանել դրանք արտահոսքից: Այս ոլորտում

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ձևավորվող հասարակական հարաբերությունների իրավական կարգավորումը պետք է իրականացվի տեղեկույթի պաշտպանությանը ներկայացվող պահանջների իրավաբանական սահմանման, տեղեկույթի, տեղեկատվական տեխնոլոգիաների պաշտպանության հստակ կառուցակարգեր մշակելու և, անշուշտ, տեղեկատվական ոլորտի օրենսդրության խախտումների համար պատասխանատվության համակարգ հաստատելու ճանապարհով: Այս համատեքստում առանձին կարևորություն է ստանում պետական գաղտնիքի՝ որպես տեղեկատվության հատուկ տեսակի պաշտպանությունը:

Ընդհանրապես, տեղեկությունների շրջանառության ժամանակ ձևավորվող իրավահարաբերությունների համակարգում պետական գաղտնիքին վերապահված են առանձնահատուկ դեր և նշանակություն: Տեղեկատվական տեխնոլոգիաների մեր դարաշրջանում, երբ հասարակության մեջ տեղեկույթը դառնում է ամենահիմնական արժեքավոր ռեսուրսներից մեկը, պետական գաղտնիքի սահմանակարգի դերն ու նշանակությունը կարևորվում են առանձնապես:

Թեև գլոբալ առումով այսօր աշխարհում հաստատված է խաղաղ գոյակցություն, այդուհանդերձ դա չի բացառում տարբեր երկրների, հատկապես մեծ տերությունների աշխարհաքաղաքական շահերի բախում, ինչը երբեմն հանգեցնում է քաղաքական և տնտեսական հակամարտությունների: Այս իրողությունը, բնականաբար, իր հերթին հանգեցնում է տեղեկատվական ռեսուրսների ձևավորման և պաշտպանության ոլորտում ծագող հիմնահարցերի սրման: Եվ չնայած այն բանին, որ սառը պատերազմի ժամանակների համեմատ ներկայումս միջպետական հարաբերություններն ավելի թափանցիկ են, օրենսդրությամբ պաշտպանվող տեղեկությունների ծավալները վիթխարի են մնում: Դրանց մի հսկայական զանգված դասվում

է պետական գաղտնիքի շարքը:

Հարավային Կովկասը հատկապես վերջին տարիներին հայտնվել է տարբեր պետությունների աշխարհաքաղաքական շահերի բախման կիզակետում, և Հայաստանը չէր կարող չզգալ դրա անմիջական հետևանքները: Կոնկրետ Հայաստանի պարագայում ազգային անվտանգության դեմ ուղղված ներքին սպառնալիքներին (քաղաքական համակարգի անկատարություն, ժողովրդավարության արմատավորման ոչ բավարար մակարդակ, ժողովրդագրական բացասական միտումներ և այլն) և արտաքին սպառնալիքներին (օտարերկրյա հատուկ ծառայությունների հետախուզական գործունեություն և այլն) գումարվում են այնպիսի արտաքին սպառնալիքներ, ինչպիսիք են՝

- **ՀՀ-ի և ԼՂՀ-ի հանդեպ զինված ուժ կիրառելու բացահայտ սպառնալիքներն Ադրբեջանի կողմից.**

- վերջինիս ու Թուրքիայի կողմից Հայաստանի տևական շրջափակումը.

- հանրապետության մեկուսացումը տարածաշրջանային ծրագրերից և այլն⁹:

Այս ամենը Հայաստանին թելադրում է յուրահատուկ պայմաններ, որոնք պահանջում են ազգային-պետական անվտանգության պաշտպանությանն ուղղված արտակարգ միջոցներ: Այս համատեքստում հանրապետության անվտանգության ապահովումը տեղեկատվական, այդ թվում՝ պետական գաղտնիքի ոլորտում, ստանում է առանձնահատուկ ռազմավարական նշանակություն:

Ակնհայտ է, որ համաշխարհային զարգացման ներկա փուլը, որի բնորոշ առանձնահատկություններից են պետությունների փոխներթափանցելիությունը, «առանց սահմանների» կարգախոսով իրականացվող միջազգային տարաբնույթ ձեռնարկումները, հրամայաբար պահանջում է կտրուկ փոփոխություններ մտցնել անվտանգության ընկալման ավանդական պատկերացումների մեջ: Գիշտ է նկատված, որ **«Եթե նախկինում վճռորոշ էին պետությունների մրցակցության ոչ միայն ռազմական, այլև քաղաքական, տնտեսական**

հնարավորությունները, ապա այսօր առաջ են եկել նաև նոր չափանիշներ, որոնք պայմանավորում են պետության տեղեկատվական ոլորտի անվտանգության տեղն ու դերը երկրի ազգային անվտանգության համատեքստում» (Հայեցակարգի ներածություն):

Ասվածը լիովին վերաբերում է ազգային և տեղեկատվական անվտանգության մաս կազմող պետական գաղտնիքի սահմանակարգին: Կարծում ենք՝ դժվար է վիճելի համարել այն դիտարկումը, որ խորհրդային տարիների իներցիայով այսօր էլ հասարակական որոշ խավերի կողմից «պետական գաղտնիք» հասկացությունն ընկալվում է որպես մի ինչ-որ արտառոց բան՝ պատված խորհրդավորության քողով, որի մասին խոսելն իսկ պահանջում է հատուկ զգուշավորություն: Իրականում, սակայն, զգուշ և զգոն պետք է լինել բուն պետական գաղտնիքի պահպանության և պաշտպանության նկատմամբ, իսկ «պետական գաղտնիք» հասկացությունը հանրային գիտակցության մեջ պետք է արմատավորել որպես անձի, հասարակության և պետության կենսական կարևորագույն շահերի պաշտպանության կառուցակարգ, որը գործում է աշխարհի բոլոր ժողովրդավարական երկրներում:

Պետական գաղտնիքի բուն էության, դերի և նշանակության թյուրըմբռնումը, չգիտակցված, ոչ պատշաճ մոտեցումը պետական գաղտնիքի սահմանակարգին արդեն իսկ սպառնալիք են ազգային անվտանգությանը, իսկ պետական գաղտնիք կազմող տեղեկությունների արտահոսքը՝ նաև նյութական կորուստ պետության, ուրեմն և անձի ու հասարակության համար, քանի որ ամեն մի պետական գաղտնիքի ետևում ֆինանսական և նյութական միջոցներ են, գիտատեխնիկական ծախսատար աշխատանք: Փորձենք առանձնացնել պետական գաղտնիքի ժամանակակից ընկալման և դրա սահմանակարգի ձևավորման հետ կապված մի քանի հայեցակարգային մոտեցումներ, որոնք ընդունված են առաջատար ժողովրդավարական երկրներում, և որոնք, կարծում ենք, ընդունելի են նաև մեզանում:

1. Պետական գաղտնիքի իրավունքն ինքնիշխան պետության անբակտելի իրավունքն է: Դրա իրականացումը պետական գործառույթ է և ազգային անվտանգության ոլորտի պետական կառավարման անբաժանելի մասը:

Անշեղորեն պաշտպանելով մարդու իրավունքներն ու ազատությունները, այդ թվում՝ տեղեկատվության ազատության իրավունքը՝ պետությունն իրավասու է անձի, հասարակության և իր իսկ կենսական շահերից ելնելով ազատ շրջանառությունից հանել որոշակի կարգի (կատեգորիայի) տեղեկություններ և դրանք դասել պետական գաղտնիքի շարքը:

Ասվածի իրավական հիմքը ՀՀ Սահմանադրության դրույթն է այն մասին, որ մարդու և քաղաքացու սահմանադրական որոշ իրավունքներ և ազատություններ, այդ թվում տեղեկատվության ազատության իրավունքը, «կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար» (հոդված 43):

2. Պետական գաղտնիքի սահմանակարգը տեղեկատվական ոլորտում հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման սահմանակարգ է: Պետական գաղտնիքը տեղեկատվական ոլորտի հասարակական հարաբերությունների օբյեկտ է: Ոչ ոք իրավունք չունի արգելափակելու տեղեկատվության ազատությունը, եթե դա նախատեսված չէ օրենքով, պետական գաղտնիքի շարքը դասելու այնպիսի տեղեկություններ, որոնք ենթակա չեն նման սահմանափակման:

3. Պետական գաղտնիքը, ինչպես տեղեկություն ընդհանրապես, ազգային ռազմավարական ռեսուրս է: Ելնելով ազգային անվտանգության շահերից՝ պետությունը պարտավոր է մշակել դրա պաշտպանության անհրաժեշտ կառուցակարգեր, սահմանել ինչպես պետական գաղտնիքի, այն-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

պես էլ այլ գաղտնատեսակների շրջանակները: Ուժեղացնելով գաղտնիության ռեժիմը՝ պետությունը միաժամանակ պարտավոր է հոգ տանել, որ այդ ոլորտում ընդունվող որոշումները լինեն կշռադատված, իրավաբանորեն հիմնավորված և անհարկի դժվարություններ չստեղծեն ձեռնարկությունների, հիմնարկների ու կազմակերպությունների բնականոն գործունեության համար, չտոնահարվեն քաղաքացիների օրինական իրավունքներն ու շահերը: Տեղեկությունների ոչ խելամիտ գաղտնագրումը հսկայական վնաս կարող է հասցնել ինչպես պետությանը, այնպես էլ հասարակությանը, երկրի առաջընթացին: Ուստի յուրաքանչյուր պետության իրավունքն է և միաժամանակ պարտականությունը՝ ոչ միայն սահմանափակել որոշակի տեղեկությունների շրջանառությունը (պաշտպանել դրանք արտահոսքից), այլև գտնել տեղեկատվության սահմանափակման օպտիմալ սահմաններ: Պետական գաղտնիքի իրավական սահմանակարգը պետք է հանդիսանա այդ օպտիմալ սահմանափակման արտացոլումը:

4. Պետական գաղտնիքի պաշտպանությունը ոչ միայն իրավական, տեխնիկական, այլև մշակութաբանական խնդիր է: Խոսքը հասարակության մեջ տեղեկության, այդ թվում և գաղտնիք կազմող տեղեկության հետ վարվելու, այն ճանաչելու և գնահատելու մշակույթի ձևավորման մասին է: «Տեղեկատվական մշակույթ» հաս-

կացությունն ներառում է անձի կրթվածության, զարգացածության, գիտակցականության ընդհանուր մակարդակը: Ի վերջո մարդը (քաղաքացին) պետք է լավ հասկանա, թե ինչու իրեն թույլ չի տրվում առնչվել այս կամ այն տեղեկությանը, որը պետական գաղտնիք է, գիտակցի դրա օրինականությունը, և այն, որ պետական գաղտնիքի սահմանակարգի արդյունավետ գործունեությունը բուն պետության գործունեության արդյունավետության պայմաններից մեկն է, որ պետական գաղտնիքից չի կարող հրաժարվել ոչ մի պետություն, և դա միանգամայն օրինաչափ է: Ընդհանրապես, մարդկային գործունը պետական գաղտնիքի սահմանակարգում կատարում է վճռորոշ դեր:

Ամփոփենք.

– պետական գաղտնիքի սահմանակարգն ազգային անվտանգության ապահովման կարևոր բաղկացուցիչ է, ուստի այն զարգացնելու համար անհրաժեշտ է կատարելագործել ազգային անվտանգության, տեղեկատվական անվտանգության վերաբերյալ օրենսդրությունն ընդհանրապես: Մասնավորապես՝ ընդունել «ՀՀ ազգային անվտանգության մասին» օրենք, «ազգային անվտանգություն» հասկացությունը սահմանել այդ իրավական ակտով, ընդունել բազային օրենք տեղեկատվական ոլորտում.

– պետական գաղտնիքը (գաղտնիք ունենալը) պետության իրավունքն է, իսկ այդ իրավունքի իրագործումը՝ պետության պարտականությունը իր քաղաքացիների, հասարակության հանդեպ:

¹ ՀՀ ՊՏ, 24.01.2002, 6 (181):

² Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ. N 237, 22.12.2007 թ., էջ 1:

³ Տե՛ս *Քինսկայան Ա. Լ.* Տեղեկատվական անվտանգության արդի մի քանի հարցեր / Պետություն. Պատմություն. Տնտեսություն. Մշակույթ. Երևան, 2009 թ., էջ 83:

⁴ Տե՛ս *Գ. Հարությունյան.* Տեղեկատվական համակարգի զարգացման հիմնախնդիրները ազգային անվտանգության համատեքստում, Երևան, 2003, էջ 3:

⁵ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության ազգա-

յին անվտանգության ռազմավարություն», «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում, Երևան, 2007, էջ 10:

⁶ Տե՛ս նույն տեղը:

⁷ ՀՀ ՊՏ, 15.07.2009, 35 (701):

⁸ Տե՛ս Государственная тайна и ее защита в Российской Федерации, под общей редакцией М. А. Буса и А. В. Федорова. Санкт-Петербург, 2007, էջ 66:

⁹ Տե՛ս «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն», «Հայկական բանակ» հանդեսի հա-

STATE SECRET PROTECTION AS A COMPONENT PART OF INFORMATION SECURITY

Gor YENGIBARYAN

*National Academy of Science of RA,
Aspirant of the Institute of Philosophy,
Sociology and Law*

In this article the significance of State secret protection in providing national and, particularly, information security in RA is discussed.

On the base of the analysis of some topical problems of national and information security of RA, the author outlines the state secret protection as one of the direction of their protection, and considers the state secret as an important strategical national information resource.

The realia of political and economical antagonism of different states make the problems more and more strained in the

sphere of information and informatization, information relations formation of information resources, their implementation and protection. This is why despite the well-known open international relations and free-availability of information there are, anyway, closed spheres concerning the secrets protected by law, and, first of all, state secret.

Based on this it is concluded that state secret (keeping information in secret) is the right, and its realization is the state's obligation concerning personality and society

The authors has proved that the legal institute of state secret is the whole complex of norms, regulating the social relations in the information sphere. Considering the legislation of that sphere, the author points at some problems, mainly, absence of basic laws, regulating the relations connected with national and information security.

ԴԱՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ**ПЕРВООЧЕРЕДНЫЕ ПРОБЛЕМЫ, ВЫЯВЛЯЕМЫЕ ПРИ
ИСПОЛЬЗОВАНИИ ПИРОТЕХНИЧЕСКИХ ИЗДЕЛИЙ****Рузанна МЕЛИКСЕТЯН***Эксперт отдела взрывотехнической и
пожаротехнической экспертизы
Национальной Бюро Экспертиз НАН РА*

С давних времен человечество при праздниках и торжественных мероприятиях устраивало фейерверки, завораживающее действие которых на людей оставляло впечатление красивой сказки. Для проведения мероприятий с фейерверками приглашались опытные пиротехники.

Фейерверочные изделия, или как их еще называют, пиротехнические изделия включают в себя любые гражданские и военные изделия, основанные на использовании процесса горения - спички, дымовые шашки, сигнальные и осветительные ракеты, патроны, снаряды и т.д. Вместо термина “фейерверк” иногда используется слово салют. Под салютом понимают высотный фейерверк, производимый с помощью фейерверочных пусковых мортир или артиллерийских орудий.

Что же собой представляют фейерверочные изделия. Вопреки бытующему мнению фейерверк не содержит взрывчатых веществ. Это смеси горючих и окислителей (то есть взрывоопасные вещества), которые легко воспламеняются и ярко горят. Поэтому фейерверочные изделия очень огнеопасны и при определенных количествах взрывоопасны, и требуют повышенного внимания при обращении с ними. Из-за наличия горящих элементов, движения

самого фейерверка или разлета его фрагментов вводится понятие опасной зоны.¹

Опасная зона представляет собой расстояние, на которое может упасть отгоревшие или недогоревшие остатки пиротехнических изделий. Находясь в опасной зоне человек, рискует получить травмы и ожоги, а горючие материалы могут разгореться. Обычно опасная зона равна от 20 до 50 метров в зависимости от калибра употребляемого фейерверка.

Современный рынок гражданской пиротехники, который формировался после распадом СССР с 90-х годов прошлого столетия, развился стихийно и бесконтрольно. На розничный рынок вышли не только знакомые до селе бенгальские огни и хлопушки, но и петарды, ракеты, фонтаны, салюты.

Огромный поток пиротехнической продукции хлынул из-за границы, зачастую весьма низкого качества и поэтому пожаровзрывоопасного. В силу наличия в составе ПИ пожаровзрывоопасных веществ обращение с пиротехническими изделиями требует особой подготовки и периодической переоценки и инструктажа данных специалистов.

К сожалению, недостаточное внимание к вопросам обеспечения техники безопасности и несоблюдение необходимых мер пожарной безопасности в процессах производства, хранения, транспортировки, реализации, применения и утилизации фейерверочных пиротехнических изделий (ПИ), зачастую приводит к многочисленным пожарам и взрывам, травмированию и гибели людей.

В странах, где существуют вековые традиции феерических представлений КНР, Голландия, Испания, Италия за последние годы насчитываются многочисленные крупные разрушительные взрывы и катастрофическими последствиями сопровождающиеся многочисленными жертвами и травмированию людей.

Что же говорить о нашей стране, где нет традиций, и что до 90-х годов прошлого столетия широким массам людей были известны только хлопушки и бенгальские огни промышленного производства, а праздничные салюты, осуществлялись специальными подразделениями Армии.

Статистика учета ненадежного случаев обращения с пиротехническими изделиями, т.е. производства и использования, приведших к пожарам и взрывам велось с 1963года. Результаты по 2010 год таковы: около 70 случаев взрывов, неудачных демонстраций, и неправильного обращения погибло 1681 человек, ранено 1987 человек. 5% из общего числа пострадавших составляют дети. Разрушено более пятисот зданий (дома, школа и производственные корпуса), материальный ущерб составляет более миллиардов долларов. Приведенная статистика относится только к официально зарегистрированным случаям (материалы НИИ прикладной химии, г. Сергиев Посад Московской области).²

В приведенной статистике охвачены только те страны, которые ведут учет. В Армении учета несчастных случаев связанных неправильным обращением с пиротехническими изделиями приведших к пожарам и взрывам не велось и не ведется по нынешнее время.

Положение дел с закупкой и продажей пиротехнической продукции в Армении прямо удручающее.

Главная причина заключается в том, что, с одной стороны, нормативная база, устанавливающая требования пожаро-

взрывобезопасности к ПИ, является весьма и весьма неполной, с другой стороны, принятые нормативные требования зачастую не выполняются, поскольку отсутствует надлежащий контроль над исполнением имеющихся нормативных требований.

Надо отметить, что ввоз пиротехнических изделий не контролируется. Рынок наводнен низкокачественными дешевыми пиротехническими изделиями. Пиротехнические изделия приобретаются за пределами республики частными лицами, не имеющими никакого представления о них. Приобретаются особенно доступные, дешевые в большинстве своем, пиротехнические изделия кустарного производства. Даже при беглом наблюдении можно обнаружить, что пиротехнические изделия продаются где угодно и кому угодно. Для приобретения пиротехнических изделий не предъявляются никакие требования, нет никаких возрастных ограничений.³ Все оптовые рынки завалены ПИ. Любой ребенок может приобрести ПИ без особого труда.

Отсутствия в республике законодательной базы еще более усугубляет положение. Мне удалось выявить только два нормативных документа:

1. Закон РА принятый 24 октября 2005 г. "О государственном урегулировании обеспечения технической безопасности."

lead to invalidity of the contract, recommend the parties under contract to develop and reconcile the program of works carried out during market research.

Studies of the conditions of the quality of marketing research have led to the conclusion that under the context of the quality of marketing research the level of conformity of the results of the task and other source data and requirements under the contract on marketing research should be understood. Therefore, it is necessary to establish individual requirements of work quality and their results for each particular contract of marketing research.

The summarizing of the practice enables to claim that in case of determination of the contract terms on the order of delivery and acceptance of the results of marketing research it is advisable to agree on the following conditions: the order and the period of notification of the customer about the readiness of the marketing research results, the place, term and manner of acceptance of the work results, the form of bilateral act of acceptance of the work results, as well as the terms and conditions of execution of the unilateral act of acceptance of the work results by the parties in case of deviation of the counterparty from execution of the bilateral act, denial of its signing or refusal of accepting of the work results.

In order to protect the parties from the unauthorized usage of the obtained results it is necessary to recommend the parties to determine in the contract the order of using the research results.

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆԵՔ**«ԻՆՔՆԱԲԱՎ ՌԵԺԻՄՆԵՐԸ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ****Արտակ ՉԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ԵՊՀ եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի ասպիրանտ

20-րդ դարի սկզբին միջազգային համակարգը ընկալվում էր որպես համեմատորեն սակավաթիվ նորմեր պարունակող հիերարխիկ բուրգ, ուր պետությունները համարվում էին համարյա միանձնյա գործող մուխ (փակ) և միակ դերակատարներ¹, իսկ ժամանակակից միջազգային իրավունքը նման է կիրառման բնագավառում կրկնօրինակվող մանրամասնեցված կարգեր ունեցող խիտ ցանցի, որը ծավալվում է շրջակա միջավայրի միջազգային իրավական պաշտպանությունից մինչև մարդու իրավունքների և միջազգային առևտուր: Նման անցումների և փոխակերպումների լույսի ներքո քաղաքական և իրավական տեսություններում առաջ քաշվեց ցանցի՝ որպես իրավակարգի հայացքների և հասկացությունների մրցակցող համակարգի հայեցակարգը: Նրանք միջազգային իրավունքը նկարագրում էին որպես կառավարական պաշտոնյաների, իրավաստեղծ մարմինների և դատավորների մի համակարգ², որպես «օրենքի ապատարածքայնացված համակարգ», որը փոխակերպել է պետությունը³ կամ էլ որպես լեգիտիմություն ստեղծող աշխարհով մեկ տարածվող հորիզոնական ճկուն համակարգ⁴:

Նման պայմաններում մենք սկսում ենք գործ ունենալ ոչ թե միատարր և ֆորմալ տեսակետից միասնականորեն կարգավորվող համակարգի հետ, այլ տարբեր հատուկ նորմերի (lex specilais-ի) համախմբերի վրա հիմնվող, դրանցով կարգավորվող

և առաջնորդվող տարբեր ենթահամակարգեր հետ:

2001 թ. Միջազգային իրավունքի հանձնաժողովի (ՄԻՉ) կողմից ընդունված «Պետությունների՝ միջազգային իրավախախտումների համար պատասխատավության հողվածները» հավասար հայեցակարգային հիմքերի վրա են դնում ընդհանուր միջազգային իրավունքի և միջազգային իրավունքի նոր՝ տարածվող ռեժիմներում առկա երկրորդային նորմերի փոխհարաբերակցությունը: «Հատուկ կանոն» վերանագրված 55-րդ հոդվածը փաստորեն բացում է դռները նման երկրորդային կանոնների համախմբերի համար:

«Այս հողվածները չեն կիրառվում այնտեղ և այն չափով, որով միջազգային իրավախախտման պայմանները կամ պետության միջազգային պատասխանատվության կիրառման բովանդակությունը տնօրինվում են միջազգային իրավունքի հատուկ կանոններով»⁵:

Մի կողմից թվում է, թե հատուկ նորմերը ձևակերպված են որոշ առաջնային նորմեր փոխատեղելու համար (օրինակ՝ պետությունների միջազգային իրավական պատասխանատվության բնագավառում)⁶՝ անձեռնմխելի թողելով նման իրավական շրջանակի մնացյալ մասի կիրառումը:

Մեկնաբանությունների 55-րդ հոդվածը անդրադառնում է նաև հատուկ նորմերի բոլոր տեսակներին՝ սկսած դրանց «թույլ» (տարրալուծված) տեսակներից, որոնք, պարզապես, հատուկ կետերի մասով *փոփոխում են* ընդհանուր միջազգային իրավունքը և ավարտուն, «ինքնաբավ ռեժիմների» նման «ուժեղ» (խտացված) տեսակները, որոնք հստակ դրույթի կամ ռեժիմի կառուցվածքի բնույթից կամ օբյեկտից կամ էլ նպատակից ելնող ենթադրության

միջոցով փորձում են ընդհանրապես բացառել ընդհանուր միջազգային իրավունքի կիրառումը⁶:

Ընդհանուր միջազգային իրավունքի բացառմանն ուղղված հատուկ նորմի այս տեսակի մասին հայեցակարգը բնութագրվում է որպես «ինքնաբավ ռեժիմներ» (ավտոնոմ ռեժիմներ) (self-contained regimes):

ՄԱԿ-ի Միջազգային իրավունքի հանձնաժողովը սահմանել և ճանաչել է ինքնաբավ ռեժիմները որպես պետությունների պատասխանատվությունը կարգավորող նորմերի ենթադաս (իսկ ավելի հստակ՝ «խտացված նորմեր»): Որպես այդպիսին՝ այն, ամենայն հավանականությամբ, տարածվում է այն դեպքերի վրա, երբ երկրորդային նորմերի որոշակի համախումբը ընդհանուր իրավական զանգվածում հավակնում է գերակայություն ունենալ միջազգային պատասխանատվության՝ այլ երկրորդային նորմերի նկատմամբ:

Այս եզրի ծագումը կապվում է ՄԱԿ-ի Միջազգային իրավունքի հանձնաժողովի հատուկ զեկուցող Վիլլեմ Ռիփհեգենի անվան հետ: ՄԻՉ ներկայացրած հաշվետվություններում և Միջազգային իրավական պատասխանատվության հոդվածների վերաբերյալ իր դիտողություններում և առաջարկություններում Ռիփհեգենը մի շարք նոր եզրեր ներդրեց: Ըստ Ռիփհեգենի՝ «...միջազգային իրավունքը կառուցվում է ոչ թե մեկ միասնական համակարգի, այլ մի շարք փոխկապակցված ենթահամակարգերի հիման վրա, որոնցից յուրաքանչյուրի շրջանակներում առաջնային և երկրորդային նորմերը սերտ փոխկապակցված են և ըստ էության անբաժանելի են իրարից⁷: Ռիփհեգենը կիրառում է նաև «հատուկ ռեժիմներ», «օբյեկտիվ ռեժիմներ», «իմպերատիվ ենթահամակարգեր» կամ «պարտադիր օբյեկտիվ ռեժիմներ» եզրերը: Նախ և առաջ փորձենք հասկանալ, թե տվյալ համատեքստում ինչ է նշանակում «ենթահամակարգ» տերմինը:

Ըստ հատուկ զեկուցողի՝ «...ենթահամակարգը վարքագծի կանոնների, ընթացակարգային կանոնների և կարգավիճակային դրույթների կանոնակարգված ամ-

բողջականություն է, որը փոխահարաբերվում է այլ ենթահամակարգերի հետ»⁸:

Այս իմաստով «ռեժիմ» եզրը նույնական նշանակություն ունեւ «ենթահամակարգ» եզրի հետ, իսկ Ռիփհեգենի հետագա հաշվետվությունները տարբերակում չէին դնում «ենթահամակարգ» և «ինքնաբավ ռեժիմ» հասկացությունների միջև («...նման ենթահամակարգերը, սկզբունքորեն, «ինքնաբավ են» (self-contained) այն առումով, որ դրանք չեն կարող բացառվել (չեղյալ հայտարարվել) այլ ենթահամարգերին պատկանող իրավիճակներով կամ նկատառումներով»)⁹:

Բրունո Սիմման տվյալ թեմայի ուսումնասիրության համար դարակազմիկ նշանակություն ունեցող իր հոդվածում ավելի առաջ գնաց՝ տալով «ինքնաբավ ռեժիմների» արդեն իսկ «դասական» դարձած նկարագրությունը. «...ինքնաբավ ռեժիմների հայեցակարգը չըպետք է կիրառվի որպես «ենթահամակարգի» հոմանիշ, այլ պետք է վերապահվի ենթահամակարգերի որոշակի տեսակ բնորոշելու համար, այն է՝ երկրորդային կանոնների լիարժեք (սպառիչ և հստակ) ամբողջությունն ընդգրկողները»¹⁰: Այսպիսով, «ինքնաբավ ռեժիմը» հանդիսանում է ենթահամակարգ, որը նպատակադրված է գրեթե ամբողջապես բացառելու իրավախախտումների նկատմամբ ընդհանուր իրավական հետևանքների կիրառումը և մասնավորապես սովորաբար տուժող կողմից հայեցողության տակ գտնվող հակազդման (ընդհանուր) միջոցները:

Չնայած Մեկնաբանությունները չեն տալիս «ուժեղ» ռեժիմի սահմանում, սակայն նրանք որպես օրինակ ներկայացնում են Միջազգային արդարադատության մշտական պալատի (Ուիմբլդոն 1923թ.) և Արդարադատության միջազգային դատարանի պատանդների (1980թ.) գործերով ուրոշումները:

Պատանդների գործում Արդարադատության միջազգային դատարանը սահմանեց դիվանագիտական ռեժիմը որպես «ինքնաբավ համակարգ»՝ հղում կատարելով այն հանգամանքի վրա, որ այն ստեղծել է խախտումներին արձագանքելու իր

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆԵՔ

ուրույն՝ «ներքին» սեփականիզմը: «Դիվանագիտական իրավունքի նորմերը ավտոնոմ համակարգ են, որ մի կողմից սահմանում են ընդունող պետության՝ արտոնությունների և անձեռնմխելիությունների վերաբերյալ պարտավորությունները, իսկ մյուս կողմից նախատեսում են վերջիններիս հնարավոր չարաշահումները դիվանագիտական ներկայացուցչության աշխատակիցների կողմից և սահմանում են ընդունող պետության տրամադրության տակ գտնվող միջոցները նման չարաշահումներին արձագանքելու համար»¹¹:

Նիկարագուայի գործով էլ Դատարանը գրեթե նմանօրինակ դիրքորոշում ցուցաբերեց մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ. համապատասխան պայմանագրերում ամրագրված են պատասխանատվության սեփական ռեժիմները, որոնք անընդունելի են դարձնում արձագանքման ցանկացած այլ տեսակ:

Մինչդեռ *Ուլիմբլոն*՝ գործով Միջազգային արդարադատության մշտական պալատի որոշումը ավելի լայն կերպով է մեկնաբանում «ավտոնոմ ռեժիմ» հասկացությունը: Այդ դեպքում խնդրո առարկա էր դառնում Քիլի ջրանցքի կարգավիճակը, որը կարգավորվում էր թե՛ ջրային ուղիների վերաբերող ընդհանուր նորմերով և թե՛ 1919թ. Վերսալի պայմանագրով՝ հենց ջրանցքին վերաբերող հատուկ նորմերով: Ահա թե ինչպես է բնութագրվել կիրառելի իրավունքը Դատարանի կողմից.

«Չնայած Քիլի ջրանցքը կառուցվել է Գերմանիայի կողմից հենց Գերմանիայի տարածքում, սակայն Վերսալյան պայմանագիրը այն չդասեց գերմանական այլ ջրային ուղիների հետ մի շարքը, և այս նպատակների համար հատուկ բաժին առանձնացվեց... Տարբերությունը այն է, որ Քիլի ջրանցքը ազատ նավարկության համար բաց է Գերմանիայի հետ չպատերազմող ցանկացած պետության ռազմանավերի և տրանզիտային նավերի համար, այն դեպքում, երբ երկրի մնացած ջրային ուղի-

ները կարող են օգտագործվել միայն դաշնակից և ասիոցացվող տերությունների համար: Այսպիսով Քիլի ջրանցքին վերաբերող դրույթները ավտոնոմ բնույթ են կրում: Նրանց հիմքում ընկած գաղափարը ոչ թե զուգահեռներ անցկացնելն է այլ ջրային ուղիներին վերաբերող դրույթների հետ, այլ հակադիրից բխող փաստարկում, այսինքն՝ դրանց բացառող փաստարկման մեթոդում»¹²:

Այստեղ դատարանի կողմից ավտոնոմ եզրի կիրառումը ենթադրում է, որ որևիցե **հատուկ** խնդրին անդրադարձող կոնվենցիոն նորմերը գերակայություն են ստանում ցանկացած արտաքին նորմի նկատմամբ:

Այսպիսով կարող են նախնական տարանջատում կատարել «ինքնաբավ ռեժիմ» հասկացության երկու ճյուղավորումների միջև: Նեղ իմաստով՝ այն նշանակում է իրավական կարգավորման բնագավառում երկրորդային նորմերի համակարգի գոյություն, որը **սահմանափակում է** ընդհանուր իրավունքի կիրառում և վերջինիս նկատմամբ գերակա դիրք զբաղեցնելու հավակնություն ունի («թույլ նորմեր»): Ավելի լայն իմաստով այն նշանակում է առաջնային և երկրորդային նորմերի միջև ընդհանուր փոխկապակցվածության առկայություն, որն էլ հաճախ «համակարգ» կամ «ենթահամակարգ» են անվանում: Վերջինիս առավելապես բացառում է ընդհանուր միջազգային իրավունքի կիրառումը՝ ընդհանուր իրավական նորմերին այլ մեկնաբանություններ տալով, իսկ վերջին ժամանակներում դրանք լիովին անտեսելով («ուժեղ»): Այս՝ ավելի լայն իմաստով «ինքնաբավությունը» շաղկապվում է միջազգային իրավունքին այդքան բնորոշ պայմանագրային հակվածության հետ. երբ որևիցե հարց կարգավորվում է որոշակի պայմանագրով, ապա միանգամից վերանում է այլ աղբյուրների **անմիջականորեն** դիմելու անհրաժեշտությունը:

Քանի որ նման ռեժիմները կառուցվածքային առումով զույգված են սոցիալական ոլորտների անկախ տրամաբանության հետ, նրանք անխուսափելիորեն, թեկուզ և

այլ տեսքով, վերարտադրում են իրավունքում առկա տարբեր գործառույթային համակարգերի միջև առկա կառուցվածքային բախումը: Մասնագիտացված իրավունքի նոր ճյուղերը պատահական չեն ծագում. դրանք կոչված են արծագանքներու տեխնիկական և գործառույթային նոր պահանջներին: Յուրաքանչյուր նորմատիվ համալիրի կամ «ռեժիմի» ներունակ են սեփական սկզբունքները, փորձաքննության սեփական եղանակը և սեփական «ինքնությունը», որը պարտադիր չէ, որ նման լինի հարևան ճյուղի «ինքնությամբ»: Օրինակ՝ առևտրային իրավունքը և շրջակա միջավայրի պաշտպանության իրավունքը բացառապես ներհատուկ նպատակներ են հետապնդում և հիմնվում են այնպիսի սկզբունքների վրա, որոնք հաճախ տարբեր կողմեր են ցույց տալիս: Նոր իրավունքն արդյունավետ դարձնելու համար այստեղ ներառում են պայմանագրային բացառությունների և դրույթների նոր ձևեր, որոնք կարող են համահունչ չլինել նախկին ընդհանուր իրավունքի կամ մասնագիտացված այլ ոլորտի իրավունքի հետ: Շատ հաճախ նոր կանոնները կամ ռեժիմները հատուկ ստեղծվում են նախկինում ընդհանուր իրավունքով նախատեսվածից տարբերվելու համար, ու քանի որ նման «տարբերությունները» լայն տարածում են գտել, դրանից տուժում է իրավունքի միասնությունը: Ինքնաբավ ռեժիմների որոշիչ հատկությունը ոչ միայն այն է, որ նրանք խիստ մասնագիտացված առաջնային կանոններ են ստեղծում, այսինքն՝ ինքնուրույն կանոններ իրավունքի հատուկ ճյուղերում, սակայն նաև իրենց սեփական ընթացակարգային նորմերն են «արտադրում» իրավաստեղծ, իրավաճանաչման և իրավական սանկցիաների վերաբերյալ՝ այսպես կոչված երկրորդային կանոնները¹³:

Ինչպես տեսնում ենք, *lex specialis*-ի համակողմանի կիրառումը հանգեցրեց թե՛ միջազգային իրավունքի ճյուղավորման և թե՛ դրա հետևանքով ընդհանուր միջազգային իրավունքում «մասնագիտացված (ինքնաբավ) ռեժիմների», այսինքն նոր՝ ընդհանուր միջազգային իրավունքի հետ հաճախ չհա-

մաձայնեցված համակարգերի ծագման, իսկ միասնական տերմինաբանության բացակայությունը հանգեցրեց իրավական ենթահամակարգերի «ինքնաբավության» բնույթի վերաբերյալ հակասական քննարկումների ծավալմանը: **Ինքնավարության** տարբեր մակարդակները սկսեցին զուգորդվել «ինքնաբավ ռեժիմներ» (self-contained regimes) եզրույթի հետ:

«Ինքնաբավ ռեժիմներ» հասկացությունը սկսեց թյուրըմբռնվել՝ հոգուտ լիովին ինքնավար իրավական ենթահամակարգերի: Սակայն սոցիալական համակարգերը չեն կարող գոյատևել իրենց միջավայրից անջատ: Նիկլաս Լունանի համակարգային տեսության համաձայն՝ բոլոր համակարգերը որոշ չափով փոխկապակցված են համակարգային զուգակցմամբ¹⁴: Միջազգային իրավունքի մնացած զանգվածից մեկուսացած իրավական ենթահամակարգերը նմանապես ըմբռնելի չեն: Միշտ կլինի կապվածության ինչ-որ մակարդակ կամ գոնե մեկնաբանություն:

Հղում կատարելով Միջազգային իրավունքի հանձնաժողովի «Ֆրագմենտացիայի ուսումնասիրման խմբի» ղեկավարին՝ պետք է ասել, որ ոչ մի պայմանագիր, լինի դա հատուկ իր նպատակային մասում կամ սահմանափակված լինի մասնակիցների քանակով, չի կիրառվում նորմատիվային վակուումում և հենվում է սովորության իրավունքի մի շարք ընդհանուր, հաճախ չգրված սկզբունքների վրա: Դեռ ավելին՝ այս նորմատիվ միջավայրը ներառում է իրավական սուբյեկտները, նրանց հիմնական իրավունքներն ու պարտավորությունները բնորոշող սկզբունքներ և այն ձևերը, որոնց միջոցով այս իրավունքներն ու պարտականությունները վերանայվում կամ վերանում են¹⁵:

Առանց «ընդհանուր իրավունքի» ամենահասության՝ հնարավոր է, որ հատուկ իրավական ենթահամակարգը, ինչպես Ջորջ Աբի-Սաաբն է նշում, կնուտացվեր «իրավական Ֆրանկենշտեյնի», որին «արդեն չէին մասնակցի լեգիտիմության և ֆորմալ նպատակահարմարության նույն հիմքի վրա»¹⁶:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Նույնիսկ այնպիսի «անջատողական» կառույց, ինչպիսին է Արդարադատության Եվրոպական դատարանը, հաստատեց, որ միջազգային ընդհանուր իրավունքի սկզբունքները մնացորդային դերակատարում ունեն ԵՄ իրավունքում:

Առևտրի համաշխարհային կազմակերպության դեպքում հենց իր քննած առաջին գործում Փանգատարկման մարմինը ճանաչեց, որ ԳԱՏՏ-ը լիովին ներկայված է մնում ընդհանուր միջազգային իրավունքում՝ նշելով. «Պայմանագիրը չպետք է ընթերցվի միջազգային հանրային իրավունքից կլինիկական մեկուսացման մեջ»¹⁷:

Այսպիսով, թյուրըմբռնումից խուսափելու համար «ինքնաբավ ռեժիմներ» եզրը չպետք է օգտագործվի լրիվ ավտոնոմ իրավական համակարգերի հիփոթեզը ուրվագծելու համար: Ընդհանրապես «ինքնաբավ ռեժիմների» ուսումնասիրությունը Միջազգային իրավունքի հանձնաժողովի տարբեր հատուկ զեկուցողների կողմից նույնպես հանգում է այն եզրակացության, որ «ինքնաբավ ռեժիմները» «փակ իրավական ցիկլ չեն», և նրանց կապը ընդհանուր միջազգային իրավունքի հետ անվիճելի է: Այսպես, արդեն իսկ հիշատակված հատուկ զեկուցող Ռիփհագենը չնայած օգտագործել էր «ավտոնոմ» եզրը և կանխատեսել էր այն «տեսական» հնարավորությունը, որ վարքագծի նորմերի, ընթացակարգային նորմերի և ստատուսային դրույթների համապատասխան համախումբը կարող է «փակ իրավական շրջան»¹⁸ ստեղծել, սակայն «...դա ընդհանրապես չի նշանակում, որ նման ենթահամարգի գոյությունը լիովին բացառում է միջազգային սովորույթային իրավունքի ցանկացած ընդհանուր՝ հակաիրավական գործողությունների իրավական հետևանքերին վերաբերող նորմերի կիրառում... Դեռևս ենթահամակարգը ինքը կարող է չգործել, և այդ դեպքում հավանական է հետադարձումը այլ ենթահամակարգի», իսկ այնուհետև ավելացնում է, որ «Բազմազան

տարբեր [պետությունների պատասխանատվության] ռեժիմներից (ենթահամակարգերից) յուրաքանչյուրը... այսօր իրենից ներկայացնում է ՄԱԿ-ի կանոնադրության ունիվերսալ համակարգում դասակարգվող միջազգային իրավունքը»¹⁹:

Ռիփհագենին փոխարինած Արանջիո-Ռուփսը նույնպես չէր առարկում հատուկ պայմանագրային ռեժիմների ստեղծելուն, քանի որ դրանք անհրաժեշտ էին «...խախտումների նկատմամբ ավելի արդյունավետ և կազմակերպված վերահսկողության ու հատուկ մեխանիզմի միջոցով դրանց արձագանքներու համար»: Սակայն նա երբեք չէր մերժում ընդհանուր իրավական նորմերին դիմելու մասին եզրակացությունը²⁰: Դետադարձումը ընդհանուր միջոցներին անհրաժեշտ էր այն դեպքերում, երբ պետությունը արդյունավետ փոխհատուցում չի ստանում, կամ եթե հակաիրավական ակտը շարունակվում է հատուկ ռեժիմի համաձայն իրականացվող գործողությունների ժամանակ²¹: Հատուկ ռեժիմի գերակա դիրքը բխում է միջազգային իրավունքի ընդհանուր նորմերից և պայմանագրի մեկնաբանությունից, բայց դա չի հանգեցնում ընդհանուր իրավունքի երաշխիքներից հրաժարվելու կանխավարկածին²²:

Ի վերջո հատուկ զեկուցող Քրոուֆորդը ձեռնապահ մնաց պատասխանելու այն հարցին, թե արդյոք «հատուկ ռեժիմները» բացառիկ բնույթ են կրում, «...յուրաքանչյուր դեպքում դրանք մեկնաբանության խնդիր են»²³:

Այսինքն պարզ է դառնում, որ ոչ մի ռեժիմ լիովին մեկուսացած չէ միջազգային իրավունքից, որն էլ իր տեսական հաստատումն է ստանում 2003թ. Ֆրագմենտացիայի ուսումնասիրման աշխատանքային խմբի ղեկավար Մարտի Կոսկենհիեմիի լույս ընծայած «Աշխատանքային հետազոտության» մեջ, ուր հատուկ ենթահամակարգերը նկարագրվում են որպես հաստատապես ներկայված ամենաառաջին ընդհանուր միջազգային իրավունքի մեջ²⁴:

Այսպես, մարդու իրավունքների պաշտպանության այնպիսի մարմիններ, ինչպիսիք են Մարդու իրավունքների Եվրոպա-

կան և Միջամերիկյան դատարանները, կանոնավոր կերպով հղում են կատարում միջազգային իրավունքի նորմերին և սկզբունքներին, որոնք վերաբերում են ոչ միայն միջազգային պայմանագրերի մեկնաբանությանը, այլև ընթացակարգային հիմնավորվածության մի շարք սկզբունքների: Օրինակ՝ 1988 թ. ընդունած իր որոշումներից մեկում Մարդու իրավունքիների միջամերիկյան դատարանը ուղղակիորեն հղում կատարեց պետությունների իրավահաջորդության սկզբունքին, ըստ որի՝ պետության պատասխանատվությունը պահպանվում է՝ պետական կառուցվածքի փոփոխությունից անկախ²⁵:

Նմանօրինակ նախադեպ ստեղծվեց նաև Մարդու իրավունքների Եվրոպական դատարանում, որը բացատրեց Եվրոպական կոնվենցիայով նախատեսված իրավունքների կապը պետական ինունհիտետների հետ: Մասնավորապես. «*Կոնվենցիան չի կարելի մեկնաբանել վակուումում: Դատարանը պետք է հաշվի նստի Կոնվենցիայի՝ որպես մարդու իրավունքների միջազգային պայմանագրի հատուկ բնույթի հետ, սակայն հաշվի առնի նաև միջազգային իրավունքի համապատասխան նորմերը: Կոնվենցիան պետք է հնարավորինս մեկնաբանել միջազգային իրավունքի այլ նորմերին համապատասխան, որի մասն էլ կազմում է հենց ինքը՝ Կոնվենցիան...»²⁶:*

Նույնը դիրքորոշումը ձևակերպվել էր նաև 1999 թ. Բանկովիչի գործում, ուր Դատարանը արտահայտեց հետևյալ դատողությունը. «*Դատարանը հիշեցնում է այն մասին, որ Կոնվենցիայի հիմքում ընկած սկզբունքները չի կարելի մեկնաբանել և կիրառել վակուումում: Դատարանը խնդիրները քննելիս պետք է հաշվի առնի միջազգային իրավունքի համապատասխան նորմերը, որոնք վերաբերում են նրա իրավասությանը... Կոնվենցիան պետք է հնարավորինս մեկնաբանի միջազգային իրավունքի նորմերին համապատասխան, որի մասն էլ այն կազմում է»²⁷:*

Այսպիսի օրինակի հանդիպում ենք նաև Առևտրի համաշխարհային կազմակեր-

պության Գանգատարկման մարմնի որոշումներում, չնայած կարծիք կա, թե ԱՀԿ համակարգում գտնվող միջազգային պայմանագրերը փակ շղթա են կազմում: «Կլիմիկական մեկուսացման» մասին հայտարարությունից հետո Գանգատարկման մարմինը բազմիցս «լրացուցիչ ուղղորդումներ էր պահանջում համապատասխան դեպքերում միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքների մեկնաբանությունների»²⁸ վերաբերյալ:

Փաստորեն, ոչ մի «ինքնաբավ ռեժիմ» չպետք է ընկալվի որպես ավտոնոմ այն առումով, որ այն բացառում է ընդհանուր իրավունքի նորմերի կիրառումը: Այլ ընդհակառակը, այս բոլոր մարմինները անընդհատ առանջնորդվում են ընդհանուր միջազգային իրավունքի նորմերը՝ հիմնվելով այն կանխավարկածի վրա, որ նորմերի այս համախմբերը կան ռեժիմը հիմնադրող փաստաթղթերը պետք է մեկնաբանել միջազգային իրավունքի նորմերին համապատասխան և առանց a priori ենթադրելու, որ նման փաստաթղթերում ամրագրված նորմերը գերակա ուժ են ունենալու:

Այսպիսով, միջազգային իրավախախտումների հետևանքների՝ ընդհանուր իրավական արգասիքները «ինքնաբավ ռեժիմներով» փոխարինելու հիմքում ընկած է այն համոզմունքը, որ որոշ դեպքերում ընդհանուր ռեժիմի կիրառումը կարող է անհարկի և նույնիսկ ոչ արդյունավետ լինել խնդրո առարկա իրավահարաբերությունների համար: Այդ իսկ պատճառով «ինքնաբավ ռեժիմները», ըստ կարգավարման առարկա հանդիսացող հարաբերությունների առանձնահատկությունների, ավելի «հարմար» և «մանրամասնեցված» որոշումներ են առաջարկում: Միջազգային կազմակերպությունների կողմից հիմնված ենթահամակարգերում անդամ պետությունների միջև ինտեգրացիայի ավելի բարձր մակարդակը համապատասխանաբար ենթադրում է սանկցիաների ավելի բարձրացած մեխանիզմների առկայություն: Մնացած այլ դեպքերում, թերևս, «ինքնաբավ ռեժիմների» գոյությունը նվազեցնում է առաջնային պարտավորությունների ու-

Միջազգային իրավունք

ժը՝ տեղ տալով պարտադիր, քան կանոնորային որոշումներին:

«Ինքնաբավ ռեժիմների» առաջացումը կարելի է դրական տեղաշարժ համարել, եթե այս *leges speciales* - ները միտված կլինեն բարձրացնելու խնդրո առարկա առաջնային կանոնների արդյունավետությունը և կանոնակարգված ընթացակարգեր ու կուլեկտիվ որոշումների ինստիտուտ կներդնեն, քանի որ «ինքնաբավ ռեժիմները» տե-

սականորեն չեն առանձնանում միջազգային իրավունքից, և նրանց գործողության շրջանակը սերտորեն կապված է վերջինիս հիմնարար դրույթների հետ, իսկ տեսական քննարկումներից դեպի կոնկրետ դեպքեր անդրադառնալու դեպքում պարզ է դառնում, որ որոշակի պահից հետո յուրահատուկ իրավական հետևանքների «ինքնաբավության» վերաբերյալ հետագա պնդումները հանգեցնելու են հակասական լուծումների ռիսկի, որը կարող է խարխիլեման ռեժիմների և ընդհանրապես միջազգային իրավունքի հեղինակությունն ու վարկանիշը:

¹ Տե՛ս A. Wolfers, *Discord and Collaboration: Essays on International Politics* (1962), at 19-24:

² Տե՛ս A.-M. Slaughter, *A New World Order* (2004):

³ Տե՛ս S. Sassen, *Losing Control? Sovereignty in an Age of Globalization* (1995), at xv, 25:

⁴ Տե՛ս M. Hardt and A. Negri, *Empire* (2000), at 13:

⁵ International Law Commission, *Report on the Work of its Fifty-third Session, Official Records of the General Assembly, Fifty-Sixth Session, Supplement No. 10 (A/56/10)*, at 58.

⁶ Տե՛ս Bruno Simma, Dirk Pulkowski, *Of Planets and the Universe: Self-Contained Regimes in International Law*, *EJIL*, June 2006, p.490:

⁷ Riphagen. *Third Report on State Responsibility*, in *ILC Yearbook* (1982), Vol. II. Part One, at 33 para 35:

⁸ *ILC Yearbook 1982 vol. 1*, p. 202 para. 16.

⁹ Preliminary Report, *ILC Yearbook 1980, vol.2 part 1 para. 39*.

¹⁰ Bruno Simma, "Self-Contained Regimes", *Netherlands Yearbook of International Law*, p. 116 vol. XVI (1985), p. 117.

¹¹ Case concerning the United States Diplomatic and Consular Staff in Tehran (*United States of America v. Iran*), *I.C.J.Reports 1980*, p. 41, para. 86.

¹² Case of the S.S. "Wimbledon", *P.C.I.J. Series A, No. 1* (1923), pp. 23-4.

¹³ Տե՛ս Bruno Simma, *Self-Contained Regimes*, 1985 *Neth. Y.B. Int'l L.* էջ 111:

¹⁴ Տե՛ս N. Luhmann, *Die Gesellschaft der Gesellschaft* (1997), at 170, 776, 779:

¹⁵ Տե՛ս M. Koskenniemi, *Study on the Function*

and Scope of the *lex specialis* Rule and the Question of "Self-Contained Regimes", *Doc. ILC(LVI)SG/FIL/CRD.1 and Add. 1*:

¹⁶ *Abi-Saab, Fragmentation or Unification: Some Concluding Remarks*, 31 *NYU J Int'l L Pol.* (1999) 919, at 926.

¹⁷ *US Standards for Reformulated and Conventional Gasoline*, Report of the Appellate Body, 29 Apr. 1996, *WT/DS2/AB/R* at 17.

¹⁸ *Виллем Рифаген, Введение, Ежегодник Международного Права*, 1982 год, том I, стр.242, пункт 16.

¹⁹ Ռիֆագենի նշված զեկույցը at 49, para. 104:

²⁰ *Газтано Аранджио-Руис, четвертый доклад, Ежегодник Международного Права*, 1992 год, том II, ч. 1, стр. 51-52, пункты 112-114.

²¹ Տե՛ս նույն տեղը, էջ 52, կետ 115:

²² Տե՛ս նույն տեղը, էջ 54, կետ 123-124:

²³ *Джеймс Кроуфорд, Третий доклад об ответственности государств, документ A/CN.4/507/Add.4* (2001), стр. 31, пункт 420.

²⁴ Տե՛ս նշված հոդվածը էջ 7:

²⁵ *Velasquez Rodriguez case*, Judgment of 29 July 1988, *OC-4/88*, *Inter-American Yearbook on Human Rights* (1988) p. 990, para. 184.

²⁶ *McElhinney v. Ireland*, Judgment of 21 November 2001, *ECHR 2001-XI*, para. 36.

²⁷ *Bankovic v. Belgium and others*, Decision of 12 December 2001, *Admissibility*, *ECHR 2001-XII*, p. 351, para. 57.

²⁸ *United States - Import Prohibition of Certain Shrimp and Shrimp Products* (6 November 1998), *WT/DS58/AB/R*, *DSR 1998:1*, p. 2755, para. 151.

“SELF-CONTAINED” REGIMES IN INTERNATIONAL LAW

Artak HARUTYUNYAN

PHD student, YSU,

Chair of European and International Law

Current article refers to the one of the most notable issues of modern international law – to the concept of self-contained regimes, which is the “strong”, substantive, type of exception of the general rule by the special. According to the UN International Law Commissions special norms are broken down into “weak” and “strong” types. The “weak” norms changes the general international law on special matters, while the “strong” are trying to eliminate the application of overall international law. The later were called “self-contained regimes” by UN ILC Special Rapporteur Riphagen and prominent scholar Bruno Simma.

We regard here to those case when a new legal regime arose that refers a spe-

cial, professional or branch issues. These regimes propose own mechanisms of responsibility for the breach of their “founding agreements”. Those mechanisms often collide (conflict) with the general international law. The “self-contained” regime is a subsystem that aimed to almost eliminate the application of general international law to the breaches and particularly the injured parties’ common means of counteractions.

We made a try to refer to the preconditions and environment for the advent of the “self-contained” regimes and discuss all those matters that do have significance for the given phenomena. A special focus is placed on the ICJ *Wimbledon* (1923) and ICJ *Hostage* (1980) cases, that ultimately, define the concept of “self-contained regimes”.

This article also highlights that we should not confuse the concept of “self-contained” regimes with the notion of autonomy from the international law.

ՈՒՍԱՆՈՂԻ ԱՄԲՈՆ

**ՀՀ-ՈՒՄ ԱԶԱՏԱԶՐԿՈՒՄ ՊԱՏԺԱՏԵՍԱԿԻ ԿԻՐԱՌՄԱՆ
ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ**

ԱՄԻ ԴԱՆԻԵԼՅԱՆ

*ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ,
բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանողուհի*

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հոդված 48-ի 2-րդ մասի համաձայն՝ «Պատիժը կիրառվում է սոցիալական արդարությունը վերականգնելու, պատժի ենթարկված անձին ուղղելու, ինչպես նաև հանցագործությունները կանխելու նպատակով»: Պատժի նպատակները որոշում են պատիժներ կատարող մարմինների և հիմնարկների խնդիրների հիմնական ուղղությունները՝ Կարելի է փաստել, որ պատժի գործառույթների մի զգալի մասն՝ իրագործվում է քրեակատարողական (ուղղիչ) հիմնարկների միջոցով:

Քրեակատարողական հիմնարկներն այն պետական կառույցներն են, որոնք նախատեսված են հանցանք կատարած անձանց հասարակությունից մեկուսացնելու, նրանց ուղղելու և հասարակության «առողջ» անդամներ դարձնելու համար:

Ազատազրկման դատապարտված անձինք ենթարկվում են որոշակի դասակարգման, որն իրականացվում է դատապարտյալներին համեմատաբար միասեռ խմբերի դասակարգելու միջոցով. այն ուղղված է պատժի նպատակների արդյունավետ իրականացմանը: Դասակարգումն իրականացվում է դատապարտյալներին քրեակատարողական հիմնարկներ բաշխելիս, ընդ որում՝ ՀՀ-ում այն իրականացվում է ոչ դատական կարգով³:

Այսպես, 1955թ. օգոստոսի 30-ին ՄԱԿ-ի ընդունած «Բանտարկյալների հետ վարվե-

ցողության նվազագույն ստանդարտ կանոնների» 69-րդ հոդվածի համաձայն՝ վերը նշված անձանց «դասակարգման նպատակներն են.

– դատապարտյալների առանձնացումը նրանցից, ովքեր իրենց հանցավոր անցյալի կամ բնավորության բացասական գծերի պատճառով նրանց վրա վատ ազդեցություն թողնել են սպառնում,

– բանտարկյալների բաժանումը ըստ կատեգորիաների, ինչը հեշտացնում է նրանց հետ տարվող աշխատանքը»:

Այս նորմն իր արտացոլումն է գտել նաև Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսդրության մեջ: Մասնավորապես, ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 68-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն.

«Ուղղիչ հիմնարկում անջատ են պահվում՝

- 1. տղամարդիկ՝ կանանցից
- 2. անչափահասները՝ չափահասներից, բացառությամբ սույն օրենսգրքի 109 հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերի...»:

Այնուհանդերձ, ՀՀ քրեակատարողական հիմնարկների համակարգի ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ ՀՀ-ում բացակայում է ազատազրկման դատապարտված իզական սեռի անչափահասներկայացուցիչների համար նախատեսված քրեակատարողական հիմնարկ: Այս հանգամանքը մասնագետները բացատրում են նրանով, որ իզական սեռի անչափահաս անձանց կողմից ազատազրկման ձևով պատիժ ենթադրող հանցագործությունների գրեթե բացակայությամբ: Նման պատճառաբանությունը, կարծում ենք,

հիմնավոր անվանել չի կարելի, քանզի ոչ մեծ քանակությամբ, սակայն այնուամենայնիվ մնան դեպքեր գրանցվել են: Այս կապակցությամբ հարկ ենք համարում ներկայացնել կտրվածքով անչափահաս իգական սեռի ներկայացուցիչների կողմից 2005-2009թթ. կատարված հանցագործությունների վիճակագրական տվյալները.

- հոդ. 175 /ավազակություն, սանկցիան՝ ազատազրկում 3-6տ./ - 1դեպք

- հոդ. 176 2-րդ մաս /կողոպուտ, սանկցիան՝ ազատազրկում 2-6տ./-1 դեպք

- հոդ. 177 1-ին մաս /գողություն/- 20 դեպք

- հոդ. 177 2-րդ մաս /գողություն, սանկցիան՝ ազատազրկում 2-6տ./ - 2 դեպք

- հոդ. 177 3-րդ մաս /գողություն, սանկցիան՝ ազատազրկում 4-8տ./ - 5 դեպք

- հոդ. 258 /խուլիգանություն/-5 դեպք

- հոդ. 216/ ակնհայտ հանցավոր ճանապարհով գույք ձեռք բերելը կամ իրացնելը/-1 դեպք

- հոդ. 263 /պոռնկագրական նյութեր կամ առարկաներ ապօրինի տարածելը/-1 դեպք

- անձի դեմ ուղղված տարբեր հանցագործություններ-23 դեպք

Վերը շարադրված տվյալներից պարզ է դառնում, որ այնքան էլ քիչ չեն իգական սեռի անչափահաս անձանց կողմից կատարված, միայն ազատությունից զրկելու հետ կապված պատիժ ենթադրող հանցագործությունները /մոտ 15 դեպք/: Ընդ որում, նրանց նկատմամբ նշանակվել են ազատազրկման հետ չկապված պատիժներ, չնայած համապատասխան հանցագործության հողվածի սանկցիան մնան հնարավորություն չի ընձեռում: Փաստորեն ստացվում է, որ «հատուկ իմունիտետի» ուժով իգական սեռի անչափահաս անձանց նկատմամբ մնան ցանկացած նոր հանցագործություն կատարելու դեպքում գործելու է նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու սկզբունքը:

Հարկ է նաև նշել, որ ՀՀ քրեական օրենսգրքի հողված 64-ի 1-ին մասի համա-

ծայն՝ «Հանցանքի շարժառիթների ու նպատակների, հանցավորի դերի, հանցանքը կատարելիս ու դրանից հետո նրա վարքագծի և այլ հանգամանքների հետ կապված **բացառիկ հանգամանքների** առկայության դեպքում, որոնք էականորեն նվազեցնում են հանցանքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանը, ինչպես նաև խմբակային հանցագործության մասնակցի կողմից խմբի կատարած հանցանքը բացահայտելուն ակտիվորեն աջակցելու դեպքում կարող է նշանակվել սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հողվածով նախատեսված պատժի նվազագույն չափից ավելի ցածր պատիժ կամ ավելի մեղմ պատժատեսակ, քան նախատեսված է այդ հողվածով, կամ չկիրառվել որպես պարտադիր նախատեսված լրացուցիչ պատիժ»: Հողվածի տեքստից հետևում է, որ նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու համար անհրաժեշտ է բացառիկ հանգամանքների առկայություն, ինչը էականորեն նվազեցնում է հանցանքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանը: Իսկ սեռական պատկանելությունը որպես մնան բացառիկ հանգամանք դիտարկել չի կարելի: Դա հակասում է ՀՀ Սահմանադրությանը, միջազգային-իրավական ակտերին, ինչպես նաև ՀՀ քրեական և քրեակատարողական օրենսգրքերի մի շարք սկզբունքների:

Այսպես, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 7-րդ հողվածի համաձայն. «Բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջև և, առանց խտրականության, ունեն օրենքով հավասար պաշտպանվածության իրավունք»: Նույն ակտի 10-րդ հողվածով նախատեսված է, որ «Յուրաքանչյուր ոք, իր իրավունքների և պարտականությունների սահմանման և իրեն ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի դեպքում, ունի լիակատար հավասարության պայմաններում անկախ և անկողմնակալ դատարանի կողմից արդարացի և իրապարակային դատաքնության իրավունք»:

ՈՒՍԱՆՈՂԻ ԱՄՔԻՈՆ

Նմանատիպ դրույթներ են պարունակում նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» 1950թ. կոնվենցիան (հոդվածներ 6, 14), «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» 1966թ. միջազգային դաշնագիրը (հոդվածներ 2, 3, 14, 26) և մի շարք այլ միջազգային-իրավական փաստաթղթեր: Այս դրույթներն իրենց արտացոլումն են գտել մի շարք ժողովրդավարական երկրների Հիմնական օրենքներում ևս: Եվ քանի որ Հայաստանի Հանրապետությունը դասվում է վերը նշված երկրների շարքը⁴, ՀՀ Սահմանադրությամբ ևս ամրագրված են այս դրույթները: Մասնավորապես, ՀՀ Սահմ. 14.1 հոդվածի համաձայն. «Բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջև», և ցանկացած տեսակի խտրականությունն արգելվում է: Իսկ 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք»:

Իսկ քրեական օրենսգրքի սկզբունքները, որոնք բխում են վերոհիշյալ դրույթներից, հանցանք կատարած իզական սեռի անչափահաս ներկայացուցիչների նկատմամբ նման մոտեցման դեպքում ամբողջությամբ խարխլվում են: Մասնավորապես, ըստ ՀՀ քր. օր.-ի 6-րդ հոդվածի. «Հանցանք կատարած անձինք հավասար են օրենքի առջև և ենթակա են քրեական պատասխանատվության անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքներից, ազգային կամ սոցիալական ծագումից, ազգային փոքրամասնությանը պատկանե-

լուց, ծննդից, գույքային կամ այլ դրույթունից»: ՀՀ քր. օր. 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Հանցանք կատարած յուրաքանչյուր անձ ենթակա է ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված պատժի կամ քրեաիրավական այլ ներգործության»: Քր. օր. 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատիժը և քրեաիրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի՝ համապատասխան են հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար լինեն նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար»:

Վերը շարադրվածից հետևում է, որ հանցանք կատարած իզական սեռի ներկայացուցիչների նկատմամբ նախատեսվածից ավելի մեղմ պատժի (ազատազրկման հետ չկապված) նշանակմամբ, ինչը ցանկացած այլ հավասար պայմաններում չէր կիրառվի տղա անչափահասների նկատմամբ, և ազատազրկման ձևով պատիժն իրականացնելու համար նախատեսված համապատասխան քրեակատարողական հիմնարկի բացակայությամբ խախտվում են օրենքի առջև հավասարության, կատարված հանցանքի և պատժի համապատասխանության, արդարության, պատասխանատվության անխուսափելիության սկզբունքները, ինչպես նաև տեղիք են տալիս սեռական խտրականությունների:

Այսպիսով, նման քրեակատարողական հիմնարկի բացակայության հիմնավորման՝ իզական սեռի անչափահաս անձանց կողմից ազատազրկման ձևով պատիժ ենթադրող հանցագործությունների բացակայության պատճառաբանությունը չի կարելի համարել ծանրակշիռ, քանի որ դա հանգեցնում է օրենքների նորմատիվության խախտման, բացի այդ՝ նման դեպքերը քիչ են, բայց եզակի չեն: Ապացուցված է՝ դիալեկտիկայի 2-րդ օրենքի համաձայն՝ քանակական փոփոխություններն, ի վերջո վերածվում են որակական փոփոխություն-

ների:

Ինչպես հիշատակվեց, պատժի նպատակների մեջ մտնում է նաև հանցանք կատարած անձի ուղղումը, որը խիստ կարևոր և չափազանց բարդ գործընթաց է: ՀՀ քրեակատարողական օրենսգրքի հոդված 16-ի համաձայն՝ «Դատապարտյալի ուղղումը մարդու, հասարակության, համակեցության կանոնների և ավանդույթների նկատմամբ դատապարտյալի հարգալից վերաբերմունքի ձևավորումն է, ինչպես նաև վերջիններիս օրինապահ վարքագծի խթանումը՝ դատապարտյալի մոտ առողջ կենսակերպի ամրապնդման և զարգացման նպատակով»: Այդ նպատակին հասնելու համար օգտագործվում են դատապարտյալների նկատմամբ ներգործության բազմաթիվ միջոցներ: Չնայած օրենսդրական ամրագրմանը՝ Հայաստանի Հանրապետությունում ամբողջությամբ անտեսվել է այդպիսի չափազանց կարևոր և խիստ արդյունավետ միջոցներից մեկը՝ բարձրագույն կրթություն ստանալու դատապարտյալների իրավունքը:

Կրթությունը հասարակության տնտեսական, հոգևոր և սոցիալական առաջընթացի հիմնական միջոցն է: Միաժամանակ, այն յուրաքանչյուր մարդու զարգացման, նրա դաստիարակության և բարեկեցության անհրաժեշտ պայման է⁶: Կրթությունը դիտվում է որպես սոցիալական կյանքի ամբողջական գործընթաց, որի միջոցով անհատները և սոցիալական խմբերը ազգային և միջազգային հանրության շրջանակներում սովորում են սեփական շահի համար գիտակցաբար զարգացնել իրենց անձնական ընդունակությունները, հարաբերությունները, ձիրքերը և գիտելիքները⁶:

Կրթության իրավունքը մարդու հիմնական իրավունքներից է և իր ամրագրումն է ստացել ՀՀ սահմանադրության 39-րդ հոդվածում, համաձայն որի. «Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք»: Նշված սահմանումից հետևում է, որ նման իրավունքով օժտված են ոչ միայն ազատության մեջ գտնվողները, այլև դատապարտ-

յալները: Պետությունն առաջին հերթին պետք է շահագրգռված լինի ինչպես ազատության մեջ գտնվողների, այնպես էլ դրանից զրկվածների կրթության իրավունքի իրականացման համար երաշխիքներ ստեղծելու հարցում, քանզի ապացուցված է, որ կրթված, իրազեկ, գիտակից մարդը ավելի հեշտությամբ է կարողանում ընտրել ճիշտ ուղի և զերծ մնալ հանցավոր ճանապարհներից: Այստեղից հետևում է, որ դա կնպաստի պետության կողմից հանցագործությունների պրեվենցիային:

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 17 հոդվածի 1-ին մասի համաձայն. «Դատապարտյալի ուղղման հիմնական միջոցներն են պատիժները կատարելու և կրելու սահմանված կարգն ու պայմանները, դատապարտյալի հետ տարվող սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքները, դատապարտյալի աշխատանքային, կրթական, մշակութային, մարզական և նման այլ զբաղվածությունը, ինչպես նաև հասարակական ներգործությունը»: Իսկ «Կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների» ներքին կանոնակարգի 112-րդ հոդվածի համաձայն. «Կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի վարչակազմը միջոցներ է ձեռնարկում կալանավորված անձանց և դատապարտյալների հանրակրթությունը, նախնական մասնագիտական (արհեստագործական), մասնագիտական միջին կրթությունը՝ պետության հաշվին, իսկ բարձրագույն և հետբուհական կրթությունը՝ նրանց հաշվին կազմակերպելու համար:

Կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի վարչակազմը կարող է կալանավորված անձանց կամ դատապարտյալների հանրակրթությունը, նախնական մասնագիտական (արհեստագործական), մասնագիտական միջին, բարձրագույն և հետբուհական կրթությունը կազմակերպել նաև ոչ նրանց հաշվին՝ համագործակցելով այլ կազմակերպությունների հետ:

ՈՒՍԱՆՈՂԻ ԱՄՔԻՈՆ

Կալանավորվածներին պահելու վայրում կամ ուղղիչ հիմնարկներում կրթությունը կազմակերպվում և իրականացվում է պետական կրթական ծրագրին համապատասխան»:

Ըստ Ներքին կանոնակարգի 113 հոդվածի. «Կալանավորված անձանց և դատապարտյալների մասնագիտական միջին, բարձրագույն և հետբուհական կրթությունն իրականացվում է դրսեկության և հեռավար ձևերով՝ կրթության պետական կառավարման լիազոր մարմնի սահմանած կարգով»: Նմանատիպ դրույթներ են պարունակում նաև ՀՀ քրեակատարողական օրենսգրքի հոդվածներ 89-ը և 90-ը: Այսպես, դատապարտյալների կրթության իրավունքի իրականացումը ապահովելու պարտականությունը դրված է ուղղիչ հիմնարկի վարչակազմի վրա, ինչը բխում է ՀՀ քրեակատարողական օր.-ի 89 հոդվածի 1-ին մասի բովանդակությունից, համաձայն որի. «Ուղղիչ հիմնարկի վարչակազմը միջոցներ է ձեռնարկում դատապարտյալի հիմնական և հեռակա բարձրագույն, հետբուհական մասնագիտական կրթությունը կազմակերպելու համար»:

Չնայած ՀՀ ներպետական օրենսդրությամբ ամրագրված է դատապարտյալների կրթության իրավունքը, սակայն ցավոք սրտի ազատագրված դատապարտված անձանց ընդհանրապես կրթության, մասնավորապես բարձրագույն կրթության իրավունքի իրականացումը ՀՀ-ում հանդիպում է մի շարք լուրջ խոչընդոտների: Ըստ պաշտոնական տվյալների՝ 2010թ. փետրվարի 1-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության ուղղիչ հիմնարկներում պահվում է 4394 դատապարտյալ, որոնցից ընդամենը 2-ն են ստանում բարձրագույն մասնագիտական կրթություն (նրանց ընդհանուր թվի մոտավորապես 0.05%-ը):

Համաձայն «Կրթության մասին» ՀՀ օրենքի 12 հոդվածի 1-ին մասի. «Սովորող-

ների կարողություններին և պահանջմունքներին համապատասխան՝ կրթական ծրագրերն իրականացվում են առկա (ստացիոնար), հեռակա, հեռավար (դիստանցիոն) և դրսեկության (ընտանեկան և ինքնակրթության) ձևերով»:

Իսկ համաձայն ՀՀ կառավարության 2001թ-ի հունվարի 16-ի «Բարձրագույն և միջին մասնագիտական կրթության պետական ընդհանուր չափանիշները» հաստատելու մասին որոշման 10-րդ կետի. «Հեռակա ձևով ուսուցման դեպքում ուսումնական տարվա ընթացքում սովորողների պարապմունքների ծավալը դասախոսների հետ պետք է կազմի ոչ պակաս, քան 160 ժամ»: Այստեղից հետևում է, որ հեռակա ուսուցումը ևս ենթադրում է դասերին պարտադիր մասնակցություն՝ ակադեմիական կրեդիտների կուտակմամբ:

Վերը հիշատակված 2 դատապարտյալները բարձրագույն կրթություն ստանում են հեռակա կարգով: Դա հնարավոր է դառնում, քանի որ նրանք գտնվում են բաց ռեժիմի ուղղիչ հիմնարկում, և դասընթացներին մասնակցելու համար նրանց տրամադրվում է կարճաժամկետ մեկնում: Այս եղանակով ապահովվում է դասախոսների հետ պարապմունքների 160 ժամ նվազագույն ստանդարտը: Հարցը հնարավոր է ինչ-որ չափով լուծել նաև կիսաբաց ռեժիմի ուղղիչ հիմնարկի դատապարտյալների դեպքում: Սակայն ինչպե՞ս վարվել կիսափակ և փակ ռեժիմի ուղղիչ հիմնարկների դատապարտյալների հետ: Փաստորեն, վերջիններս ունեն բարձրագույն և հետբուհական կրթության իրավունք, որը կրում է զուտ դեկլարատիվ բնույթ, քանի որ դրա իրագործման համար չկան անհրաժեշտ կառուցակարգեր: Վերը շարադրված օրենսդրական դրույթներից բացի՝ դեկլարատիվ բնույթ է ստանում նաև «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածը, համաձայն որի. «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության բնագավառում պետության քաղաքականության սկզբունք-

ներն են՝

1. մարդու և քաղաքացու՝ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն ստանալու իրավունքի ապահովումը և պաշտպանությունը,

2. բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մատչելիությունը...»:

Այս խնդրի հիմնական պատճառը, կարծում ենք, այն է, որ ՀՀ-ում չի գործում հենավար (դիստանցիոն) կարգով ուսուցման ձևը, չնայած որ ՀՀ օրենսդրությունում դա նախատեսվում է: Որպես լուծում առաջարկում ենք այդ համակարգը ներդնել ՀՀ բոլոր քրեակատարողական հիմնարկներում և վարչակազմի սահմանած հատուկ ժամերին, համակարգչային տարբերակով (ինտերնետային ցանցի միջոցով) այդ նպատակով նախատեսված հատուկ կահավորված և հսկվող սենյակներում կազմակերպել այն դատապարտյալների բարձրագույն կրթությունը, ովքեր ցանկություն կհայտեն սովորելու՝ անկախ քրեակատարողական հիմնարկի ռեժիմից (բաց, կիսաբաց, կիսափակ, փակ):

Դատապարտյալների բարձրագույն

կրթություն ստանալու իրավունքի իրագործման կարևորությունը այն է, որ, ինչպես հիշատակվեց, դա կնպաստի հանցագործությունների նախականմանը, քանի որ, բացի գիտակից, իրազեկ և կրթված լինելուց, ինչը թույլ է տալիս համարժեք գնահատել իրականությունը և սեփական արարքները, դատապարտյալներին նաև կտրվի իրատեսական հնարավորություն իրագործելու ՀՀ Սահմանադրության 34-րդ հոդվածով նաև նրանց վերապահված իրավուքը: Ըստ այդ հոդվածի. «Յուրաքանչյուր ոք ունի իր և իր ընտանիքի համար բավարար կենսամակարդակի, այդ թվում՝ բնակարանի, ինչպես նաև կենսապայմանների բարելավման իրավունք: Պետությունն անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում քաղաքացիների այդ իրավունքի իրականացման համար»: Այսինքն՝ նրանք հնարավորություն կունենան (մասնագիտական պատրաստվածության առումով) պատժից ազատվելուց հետո ազնիվ աշխատանքի միջոցով ապրուստի միջոցներ վաստակել: Գաղտնիք չէ, որ բարձրագույն կրթություն ունեցող անձը ավելի հեշտությամբ կարող է աշխատանք գտնել:

¹ Տե՛ս Հ.Մ. Խաչիկյան, Հայաստանի Հանրապետության քրեակատարողական իրավունք: Ուսումնական ձեռնարկ: Երևան, 2011թ., էջ 84:

² Խոսքը մի մասի մասին է, քանի որ քրեակատարողական հիմնարկների միջոցով իրականացվում են միայն կալանք, որոշակի ժամկետով և ցմահ ազատազրկում պատժատեսակները:

³ Տե՛ս Хачикян А.М. Лишение свободы: Криминологические и уголовно-исполнительские проблемы. Ереван 2008, գլուխ առաջին:

⁴ ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է»:

⁵ Տե՛ս Վ. Ն. Այվազյան, Մարդու իրավունքներ և ազատություններ: Ուսումնական ձեռնարկ: Երևան 2007թ., էջ 207:

⁶ Տե՛ս The Recommendation Concerning Education for International Understanding, Cooperation and Peace and Education Relating to Human Rights and Fundamental Freedoms. 1974. 19 November.

⁷ Մեր կարծիքով, նման կարգը արդարացի չէ և հակասում է ազատազրկում պատժատեսակի բնույթին: Չէ՞ որ ազատազրկման ձևով պատիժը ենթադրում է անձի մեկուսացում հասարակությունից և նրան ազատությունից զրկում: Իսկ ուսման, ինչպես նաև աշխատանքի և սոցիալական վերականգնման նպատակով ուղղիչ հիմնարկից դուրս գալը ենթադրում է որոշակի ժամանակով վերադարձ հասարակություն և ազատության վերականգնում:

ՈՒՍԱՆՈՂԻ ԱՄԲԻՈՆ**SOME ISSUES ON IMPRISONMENT EXECUTION IN RA****Ani DANIELYAN**

*4-rd year Bachelor student,
Faculty of Law, YSU*

This article discusses some problems related to the execution of imprisonment in RA, in particular, issues arising in regard to the application of imprisonment on juvenile female criminals, as well as problems of lack of structures for providing high and graduate education to persons sentenced to imprisonment.

The problem is that there is no a special penitentiary institution for female juveniles who have committed crimes. The main explanation for the absence of such an

establishment for minor females is the argument, that representatives of this category hardly commit crimes which can be punished by an imprisonment. But statistics testifies for another picture.

An important issue is related also to the guaranteeing the right to education of persons sentenced to imprisonment, as there are no appropriate structures for the organization of education of prisoners.

As possible solutions of above risen problems it is suggested to create a special penitentiary institution for female juvenile criminals, as well as to introduce the system of distance learning in the RA penitentiary establishments.

Հարգելի հեղինակներ, Չանդեսին նյութեր հանձնելիս խնդրում ենք պահպանել հետևյալ պահանջները.

Խմբագրական խորհուրդը և խմբագրությունը կքննարկեն միայն այն նյութերը, որոնք կուղարկվեն էլեկտրոնային փոստով կամ խմբագրություն կներկայացվեն թղթային տարբերակով՝ էլեկտրոնային տարբերակի հետ միասին:

Հոդվածները՝ որպես կանոն առավելագույնը 25.000 տպագիր նիշ՝ ներառյալ տողատակերը:

Նյութերն ընդունվում են համապատասխան ԲՈՒՀ-երի ամբիոնների, գիտահետազոտական հիմնարկների բաժինների երաշխավորության, ինչպես նաև մասնագետի կարծիքի առկայության դեպքում: Նյութին կից անհրաժեշտ է ներկայացնել հոդվածի անգլերեն վերնագիրը, համառոտագիրը, հեղինակի տվյալները:

Նյութերի ծավալը որոշելիս խնդրում ենք հիմք ընդունել հետևյալ պահանջները՝ տեքստը տպագրվում է սովորական A4 չափի թղթի վրա, 1.5 տողաչափով, հիմնական տեքստի տառերի չափը՝ 12, տողատակերի տառերի չափը՝ 10, լուսացքները. ձախից, վերևից, աջից և ներքևից՝ 2 սմ:

Տառատեսակը՝ հայերեն տեքստերինը՝ «Arial Armenian», ռուսերենինը՝ «Arial LatRus»:

Նորմատիվ ակտեր օգտագործելիս տեքստում պետք է նշել դրա տեսակը (Հայաստանի Հանրապետության օրենք, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագիր և այլն),

ընդունման ժամանակահատվածը (ընդունման օրը՝ թվերով, ամիսը՝ տառերով, ընդունման տարին՝ քառանիշ թվերով, օրինակ՝ 2003 թվականի դեկտեմբերի 12), չակերտներում նշել լրիվ (առանց կրճատումների) անվանումը (այդ թվում՝ ոչ թե ՀՀ, այլ Հայաստանի Հանրապետություն): Այս դեպքում տողատակում բավարար է նշել հրատարակության աղբյուրը:

Տեքստում կարելի է նշել ակտի տեսակը, ամսաթիվը և առանց չակերտների կրճատ անվանումը, որը կտա ճիշտ պատկերացում փաստաթղթի մասին:

Հեղինակներին խստիվ խորհուրդ է տրվում մինչև ուղարկելը մանրամասն ստուգել շարվածքի, ինչպես նաև համապատասխան իրավաբանական հասկացությունների ճշտությունը:

Նյութի առաջին էջում՝ վերնագրից հետո, նշվում են տեղեկություններ հեղինակի մասին, որոնք կարտացոլվեն մեր պարբերականում՝ հեղինակի անուն և ազգանունը ամբողջությամբ, պաշտոնը և աշխատանքի վայրը, առկայության դեպքում՝ գիտական աստիճանը և կոչումը: Օրինակ՝ ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի դոցենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու ...:

Վերջին էջում հեղինակը պարտադիր դնում է իր ստորագրությունը, նշում կոնտակտային տվյալները: